Հավելված
ՀՀ հաշվեքննիչ պալատի
2025թ. ապրիլի 29-ի թիվ 29-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ 3
2. ԱՄՓՈՓԱԳԻՐ 5
3. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 6
4. ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 8
5. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 9
6. ԱՅԼ ՓԱՍՏԵՐ 52
7. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 56

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը[1]	Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 150-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	2024 թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» № 2323-Ն որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի № 699-Լ և № 727-Լ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 659-Լ որոշում, ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ. մարտի 13-ի № 254-Ն հրաման և այլ իրավական ակտեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2024 թվականի հունվարի 1-ից 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2025 թվականի հունվարի 13-ից 2025 թվականի ապրիլի 30-ը ներառյալ :

[1] «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:

Հաշվեքննության մեթոդաբանությունը[2]	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացվել համապատասխան մեթոդաբանությունների համաձայն:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային Ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վարչության կողմից: Աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Բարսեղյանը:

[2] «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:

2. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ տարածքային և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հաշվետու ժամանակաշրջանի գործունեության հաշվեքննությամբ արձանագրվել են հետևյալ հիմնական փաստերը.

1. «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» (1049-21001) և «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» (1049-21002) միջոցառումներն իրականացնելիս, առանձին դեպքերում.
   1.1. Ձեռք են բերվել նախագծային փաստաթղթեր և կապալի պայմանագրերի շրջանակներում կատարվել են աշխատանքներ՝ չպահպանելով օրենսդրությամբ սահմանված շինարարական նորմերը:
   1.2. Չեն պահպանվել կիրառելի իրավական ակտերի և կապալի պայմանագրերի պահանջները:
   1.3. Կամուրջների վերականգնման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը չեն ենթարկվել պետական համալիր փորձաքննության, իսկ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների կամուրջների նախագծերը իրականացվել են առանց լիցենզավորված կազմակերպության կողմից տրված տեխնիկական վիճակի մասին եզրակացության:

Արձանագրված անհամապատասխանություններն նկարագրված են սույն ընթացիկ եզրակացության V բաժնում:

3 ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ[3]

Հաշվեքննության իրականացման համար Նախարարության կողմից տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն:

Նախարարության «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» (ձև Հ-2), ինչպես նաև «Հաշվետվություն հիմնարկների դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների» (ձև Հ-4) հաշվետվություններում «Ճանապարհային ցանցի բարելավում» (1049) ծրագրի, «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» (21001) և «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» (21002) միջոցառումների «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) հոդվածով, ինչպես նաև «Էներգաարդյունավետության ծրագիր» (1232) ծրագրի «Պետական աջակցություն բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների իրականացման» (12002) միջոցառմամբ «Սուբսիդիաներ ոչ պետական ֆինանսական կազմակերպություններին» (452200) արձանագրված անհամապատասխանությունները հանգեցրել են ոչ էական խեղաթյուրումների[4]: Այսպես՝

2024 թվականի բյուջեի կատարման հաշվետվություններում.

- «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման» (1049-21001) միջոցառման գծով փաստացի ծախսի և տարեսկզբի կրեդիտորական պարտքի ցուցանիշները խեղաթյուրված են 1,325,079.86 հազարական դրամի չափով:

---

[3] Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնու՞մ է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:

[4] Տվյալ դեպքում արձանագրված՝ բյուջեի կատարման հաշվետվությունների փաստացի ծախսերի և կրեդիտորական պարտքերի խեղաթյուրումները, օրենսդրության համաձայն, ազդեցություն չեն կարող ունենալ Հաշվեքննիչ պալատի կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ տրվող կարծիքի վրա. «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով (27-րդ հոդված) Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը, ներառյալ կարծիքը, ներկայացնում է կառավարության կողմից ներկայացվող պետական բյուջեի կատարման վերաբերյալ: «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է՝ «պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ»:

- «Պետական աջակցություն բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների իրականացման» (1232-12002) միջոցառման գծով փաստացի ծախսի ցուցանիշը խեղաթյուրված է 147,824.4 հազ. դրամի, իսկ կրեդիտորական պարտքերի տարեսկզբի և հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ ցուցանիշները, համապատասխանաբար՝ 186,767.3 հազ. դրամի և 38,937.9 հազ. դրամի չափերով:

Արձանագրված անհամապատասխանությունները, Նախարարության առարկություններն և բացատրությունները, ինչպես նաև դրանց վերաբերյալ հաշվեքննողների մեկնաբանությունները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության «Անհամապատասխանություններ» բաժնում:

4. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նախարարությանը՝ որպես ծրագրերի կատարող, 2024 թվականի պետական բյուջեի տարեկան պլանով նախատեսվել է 218,789,850.3 հազ. դրամի ծախս, ճշտված պլանը կազմել է 265,039,070.4 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 263,719,191.2 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 253,544,942.1 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 262,213,949.7 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 95.66%: Ըստ ծրագրերի ցուցանիշները ներկայացված են ստորև պատկերված աղյուսակում:

Նախարարության 2024 թվականի պետական բյուջեի ցուցանիշները

(հազար դրամ)

Ծրագրի դասիչ	ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստ (դրամարկ-ղային ծախս)	Փաստացի ծախս
	ԸՆԴԱՄԵՆԸ	218,789,850.3	265,039,070.4	253,544,942.1	262,213,949.7
1001	Տարածքային կառավարման ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգի իրականացում	1,645,944.1	1,748,148.7	1,735,914.3	1,738,258.9
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	-	76,536.0	64,956.0	64,956.0
1019	Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր	4,486,593.7	5,194,625.2	5,120,775.6	5,120,775.6
1038	Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնագիտական վերապատրաստում և հատուկ ուսուցում	14,594.0	14,594.0	13,953.7	13,953.7
1040	Կոշտ թափոնների կառավարում	2,444,112.0	2,652,455.6	1,709,055.0	1,709,055.0
1049	Ճանապարհային ցանցի բարելավում	50,267,249.5	108,283,095.1	102,217,389.2	110,468,544.3
1072	Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում	-	995,666.3	993,346.5	993,346.5
1073	Ընդերքի ուսումնասիրության, օգտագործման և պահպանման ծառայություններ	22,000.0	22,000.0	22,000.0	22,000.0
1077	Երկաթուղային ցանցի զարգացում	327,445.0	332,635.2	332,635.2	332,635.2
1110	Այլընտրանքային աշխատանքային ծառայություն	7,860.0	8,950.0	7,240.0	7,240.0
1146	Հանրակրթության ծրագիր	18,026,809.4	19,259,130.6	19,257,895.8	19,257,895.8
1148	Արտադպրոցական դաստիարակության ծրագիր	29,481.1	45,975.0	45,921.3	45,921.3
1157	Քաղաքային զարգացում	16,583,734.3	10,866,474.4	8,353,676.0	8,142,486.8
1167	Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագիր	1,259,146.1	176,620.3	64,559.3	270,130.2
1171	Ռադիոակտիվ թափոնների կառավարում	40,264.2	40,264.2	40,264.2	40,264.2
1183	Ապահով դպրոց	-	1,939.8	-	-
1189	Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր	10,286,163.6	14,846,924.4	14,191,245.0	14,191,245.0
1192	Կրթության որակի ապահովում	602,968.9	857,591.9	851,801.4	851,801.4
1198	Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագիր	60,353.9	60,353.9	60,353.9	60,353.9
1205	Սոցիալական ապահովություն	2,000.0	4,000.0	3,245.2	3,245.2
1212	Տարածքային զարգացում	92,003,509.4	92,838,952.0	92,838,637.4	92,838,637.4
1232	Էներգաարդյունավետության ծրագիր	6,354,879.7	4,036,338.9	4,006,203.5	4,427,329.7
1236	Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	13,619,007.2	1,792,423.5	730,767.6	730,767.6
1238	Նախադպրոցական կրթություն	705,734.2	883,375.4	883,106.0	883,106.0

5. ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 «Ճանապարհային ցանցի բարելավում» (1049) ծրագրի, «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» (21001) և «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» (21002) միջոցառումներ «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) հոդված

5.1.1 Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի № 254-ն[5] հրամանի Հավելված 2-ի Օրինակելի ձև Հ-2 հաշվետվության «Լրացման պահանջների» 9-րդ կետի և Օրինակելի ձև Հ-4 հաշվետվությունում կրեդիտորական պարտքերի տարեսկզբի դրությամբ լրացման պահանջների նկատմամբ:

«Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» Հ-2 հաշվետվության փաստացի ծախս սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ կրեդիտորների չվճարված հաշիվները, հաշվարկված աշխատավարձի ու կրթաթոշակների գծով կատարված ծախսերը:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» (1049-21001) միջոցառման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) հոդվածով, հաշվետու ժամանակահատվածում, սկզբնական հաշվառման փաստաթղթերով (աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություններով) փաստացի (իրական) ծախսերը կազմել են 51,127,573.05 հազ. դրամ, այնինչ Հ-2 հաշվետվությամբ այն ցույց է տրվել 52,452,652.91 հազ. դրամ կամ 1,325,079.86 հազ. դրամով ավելի:

Վերը նշված հոդվածով տարեսկզբի կրեդիտորական պարտքը ցույց է տրվել զերո դրամ, այնինչ համաձայն Նախարարության հաշվապահական հաշվառման տվյալների՝ կրեդիտորական պարտքը տարեսկզբի դրությամբ կազմել է 1,325,079.86 հազ. դրամ:

Նախարարության առարկությունները և բացատրությունները.

Փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը կազմում են 52,452,652.91 հազ. դրամ: Հետևաբար որևէ անհամապատասխանություն առկա չէ ինչպես փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերի, այնպես էլ Հ-2 հաշվետվությամբ փաստացի ծախսերի միջև:

---

[5] *«Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման, ամփոփման ընդհանուր պայմանները, հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի № 176-ն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի մարտի 28-ի № 324-ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին»*

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք Արձանագրության «II Արձանագրված անհամապատասխանություններ» բաժնից հանել 1-ին կետը:

Հայտնում ենք, որ Հ-4 հաշվետվությունում տարեսկզբի կրեդիտորական պարտքը զրո է (այն պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀԾ հաշվապահական ծրագրում նշված միջոցառումը մուտքագրվել է 2024թ-ից), որը համապատասխանում է Նախարարության հաշվապահական գրանցումների տարեսկզբի կրեդիտորական պարտքին:

Ուստի առաջարկում ենք Արձանագրության «II Արձանագրված անհամապատասխանություններ» բաժնից հանել նաև 2-րդ կետը:

Հաշվեքննողի մեկնաբանությունը՝

Փաստաթղթերով՝ հաշվետու տարում կատարված աշխատանքների ընդունման-հանձնման արձանագրություններով ձևակերպված իրական ծախսերը կազմել են 51,127,573.05 հազ. դրամ: Հաշվետվությամբ արտացոլված 52,452,652.91 հազ. դրամ փաստացի (իրական) ծախսերում ներառվել են նաև ըստ հաշվապահության տվյալների տարեսկզբի դրությամբ առկա 1,325,079.86 հազ. դրամի չափով կրեդիտորական պարտքերը:

5.1.2 Առկա է անհամապատասխանություն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ պարբերության, 7.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքաշինության նախարարության 1998 թվականի ապրիլի 28-ի № 44 հրամանով հաստատված «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի» 1.2-րդ կետի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի «ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային Ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի № 11-ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» № 28-Ն հրամանի հավելվածի՝ «ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերի» 42-րդ աղյուսակում սահմանված նվազագույն արժեքների նկատմամբ:

- ✓ Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի
  - 16-րդ հոդվածի 3-րդ պարբերության՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը պարտադիր է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների համար:
  - 7.1-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի՝ շինարարություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտը պարտավոր է

շինարարության ընթացքում ապահովել հաստատված նախագծի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները:

✓ Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ ավտոմոբիլային ճանապարհների նախագծումը, շինարարությունը, միջին նորոգումը (նորոգումը) և պահպանումն իրականացվում են նորմատիվ իրավական և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների համաձայն:

✓ Համաձայն «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգի» 1.2 կետի՝ շինարարության տեխնիկական հսկողությունը միջոցառումների համալիր է, որն իրականացվում է շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում և ուղղված է պարզելու իրականացվող աշխատանքների համապատասխանությունը որակի ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև կանխելու անորակ շինարարության իրականացումը:

✓ Համաձայն «ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերի» 42-րդ աղյուսակի ճանապարհային պատվածքի կոնստրուկտիվ շերտերի հաստությունը պետք է նշանակել հաշվարկով, սակայն սույն շինարարական նորմերի 42-րդ աղյուսակում բերված արժեքներից ոչ պակաս:

✓ Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 7.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի՝ շինարարություն իրականացնող քաղաքաշինության գործունեության սուբյեկտը ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերում նորմատիվ բնույթի խախտումներ հայտնաբերելիս իրավունք ունի դադարեցնելու շինարարական աշխատանքները և պահանջելու նախագծային փաստաթղթերի այլընտրանքային փորձաքննություն.

Հաշվեքննությամբ պարզվել է, որ

○ ՀՀՇՆ 32-01-2022-ը ուժի մեջ մտնելուց՝ 12.12.2022թ.-ից հետո փորձաքննություն անցած և հաստատված 9-ը օբյեկտների նախագծերում 150031 քմ ավազակոպճային հիմքի շերտի հաստությունը աղյուսակ 42-ում սահմանված նվազագույնը 12 սմ-ի փոխարեն ընդունվել է 10 սմ-ը, իսկ 753 քմ-ինը՝ 8 սմ: Գործարանային արտադրության 103017 քմ սև խճի շերտի հաստությունը աղյուսակ 42-ում սահմանված նվազագույնը 8 սմ-ի փոխարեն ընդունվել է 6 սմ: Նշված օբյեկտների շինարարական աշխատանքների պայմանագրերի շրջանակներում 2024 թվականի հանձնման-ընդունման արձանագրություններով ընդունվել են 136012 քմ 10 սմ հաստությամբ ավազակոպճային հիմքի շերտի և 102837 քմ 6 սմ հաստությամբ սև խճի շերտի պատրատման աշխատանքներ՝ 914,074.72 հազ. դրամ գումարով:

○ Մինչ ՀՀՇՆ 32-01-2022-ը ուժի մեջ մտնելը կազմված նախագծերի հիման վրա, ՀՀՇՆ 32-01-2022-ը ուժի մեջ մտնելուց հետո՝ 2023 թվականին և 2024 թվականին կնքված շինարարական աշխատանքների կատարման 6 պայմանագրերով 230869 քմ ավազախճային հիմքի հաստությունը նվազագույնը 12 սմ-ի փոխարեն սահմանվել է 10

սմ: 55236քմ սև խճի շերտի հաստությունը նվազագույնը 8 սմ-ի փոխարեն սահմանվել է 6 սմ, իսկ 7863 քմ-ինը 4 սմ: 11140 քմ խճային հիմքի հաստությունը նվազագույնը 15 սմ-ի փոխարեն նախատեսվել է 12 սմ: Նշված օբյեկտների շինարարական աշխատանքների պայմանագրերի շրջանակներում 2024 թվականի հանձնման-ընդունման արձանագրություններով ընդունվել են 172644 քմ 10 սմ հաստությամբ ավազախճային հիմքի շերտի, 55186 քմ 6 սմ հաստությամբ և 5825 քմ 4 սմ հաստությամբ սև խճի շերտի և 12 սմ հաստությամբ 11323 քմ խճային հիմքի պատրաստման աշխատանքներ՝ 583,038.29 հազ. դրամ գումարով :

Նախարարության առարկությունները և բացատրությունները.

Նշված 9 օբյեկտների շինարարական աշխատանքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման գնման գործընթացները իրականացվել են նախքան ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի «ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային Ճանապարհներ» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի № 11-ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» № 28-Ն հրամանի ուժի մեջ մտնելը, այն է՝ 21.12.2022թ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի № 28-Ն հրամանով նման դրույթ չի սահմանվել:

Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Եթե պայմանագիրը կնքելուց հետո ընդունվել է օրենք, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ, քան պայմանագիրը կնքելիս գործող կանոնները, ապա կնքված պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, բացի այն դեպքերից, երբ օրենքում սահմանված է, որ դրա գործողությունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

Ելնելով վերոնշյալ իրավակարգավորումներից պարզաբանում ենք, որ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման գնումների գործընթացի արդյունքում 2022 թվականին կնքված պայմանագրերը, որոնց բաղկացուցիչ մասն են հանդիսանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրերը, որոնցով սահմանված են նախագծման աշխատանքներին առաջադրվող պահանջները, ՀՀ օրենսդրության փոփոխումից հետո ենթակա չեն փոփոխման:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման գնումների գործընթացի և դրանց արդյունքում կնքված պայմանագրերի պահանջների հետ

անհամապատասխանություն չի արձանագրվել: Արձանագրվել է ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները նորմատիվ իրավական և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներով չկատարման դեպքեր՝ անհամապատասխանություններ: Նախարարությունը որպես քաղաքաշինական գործունեության սուբյեկտ՝ կառուցապատող (պատվիրատու), չի պահպանել տվյալ՝ շինարարական աշխատանքների իրականացման ժամանակահատվածում գործող, վերը նշված՝ հաշվեքննության չափանիշ հանդիսացող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջները:

5.1.3 Առկա է ահամապատասխանություն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերության «ա» կետի և կապալային աշխատանքների կատարման պետական գնման № ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/40Շ պայմանագրի 1.2-րդ կետի պահանջների նկատմամբ:

Համաձայն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ պարբերության «ա» կետի՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան (բացառությամբ սույն հոդվածի երրորդ պարբերության «ե» և «ե.1» կետերով նախատեսված դեպքերի), շինարարության թույլտվության հիման վրա:

Համաձայն ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/40Շ պայմանագրի 1.2 կետի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ

- Համաձայն ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/40Շ պայմանագրով աշխատանքները կատարելու համար հիմք հանդիսացող «Տ4-13, /Հ-39/ (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի կմ0+000-կմ12+900 հատվածի հիմնանորոգում» օբյեկտի նախագծային փաստաթղթերի «Ամփոփագրեր» ալբոմի «Ոչ կոշտ ճանապարհային պատվածքի հաշվարկի», որով ՕДН 218.046-01-ի (″Проектирование нежестких дорожных одежд″) հիման վրա հաշվարկվել է պատվածքի կոնստրուկցիան՝ շերտերի նյութերը և հաստությունները, որոնց դեպքում պատվածքը կբավարարի բեռի կարճատև ազդեցության տակ ամբողջ կոնստրուկցիայի առաձգական ճկվածքի, գրունտի և պատվածքի հատիկային կազմ ունեցող շերտերի սահքի դիմադրության ցուցանիշների և բեռի երկարատև ազդեցության տակ պատվածքի հատիկային կազմ ունեցող շերտերում սահքի կայունության ցուցանիշների համապատասխանությունը նորմերով սահմանված ցուցանիշներին:

✓ Հաշվարկում պատվածքի վերին շերտի համար ընդունվել է 4 սմ հաստությամբ մանրահատիկ խիտ Ա տիպի ասֆալտբետոն և հաշվարկի արդյունքում ընտրված պատվածքի կոնստրուկցիայում վերին շերտը սահմանվել է 4 սմ հաստությամբ «Ասֆալտբետոն մանրահատիկ, խիտ Ա տիպի, ԲՀԴ 60/90 բիտումով, ԳՈՍՏ 9128-2013», այնինչ ծավալաթերթում այն նշվել է Բ տիպի: Համաձայն հանձնման-ընդունման արձանագրություններով ընդունված 71936.6 քմ (որից 2024-ին 50236 քմ-ն 2024թ.-ին) 4 սմ հաստությամբ վերին շերտի ասֆալտբետոնե խառնուրդի փորձարկման արձանագրությունների, վերին շերտն իրականացվել է Բ տիպի մանրահատիկ ասֆալտբետոնով, կամ 372,988.16 հազ. դրամի աշխատանքները (որից 2024թ. Կատարվածը՝ 260,473.66 հազ. դրամ) չեն համապատասխանում բեռի երկարատև ազդեցության տակ պատվածքի հատիկային կազմ ունեցող շերտերում սահքի կայունության նորմատիվային ցուցանիշներին (երկարատև ազդեցության բեռի տակ հաշվարկային առաձգականության մոդուլը Ա տիպի ասֆալտբետոնի համար 480 ՄՊա է, իսկ Բ տիպի համար 400 ՄՊա է):

✓ Հաշվարկի «Հիմնատակի գրունտի հաշվարկային բնութագրերի որոշումը» բաժնում նշվել է, որ համաձայն երկրաբանական հետազոտությունների արդյունքների հողային պաստառի վերին մասում առկա գրունտներից թեթև ավազային կավերը և թեթև, փոշենման ավազակավերը անբարենպաստ են ճանապարհային պատվածքի հիմնատակի համար, քանի որ դրանց հաշվարկային բնութագրերը կազմում են 48 ՄՊա և 52 ՄՊԱ և «...*Հաշվի առնելով պատվիրատուի կողմից ճանապարհային պատվածքի հաստության սահմանափակումը՝* ***նախագծում նախատեսվել է հիմնատակի գրունտի ուժեղացում՝*** *այն մասնակիորեն փոխարինելով խճային լիցքով: Հիմնատակի գրունտը փոխարինող խճային լիցքի խորությունն ընդունվել է 30 սմ, հաշվի առնելով փոքր խորության վրա կոմունիկացիաների առկայությունը: Ամրացման աշխատանքների կատարումից հետո կապալառուի կողմից պետք է ապահովվի հիմնատակի գրունտի ամրության* $E_{.ñ} = 80$ *ՄՊա արժեքը, որն էլ ընդունվել է հետագա նախագծման համար...*»:

Չնայած վերոգրյալին նախագծի ծավալաթերթում և պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվում անբարենպաստ գրունտների հեռացման և 30 սմ հաստությամբ խճային շերտի կառուցման աշխատանքներ չեն ներառվել: Կատարողական փաստաթղթերով նույնպես վերը նշված աշխատանքները չեն իրականացվել:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ համաձայն երկրաբանական հետազոտությունների արդյունքների թեթև ավազային կավեր և թեթև, փոշենման ավազակավեր, որոնք ենթակա էին հեռացման և դրանց տեղը 30 սմ խճային շերտի կառուցման, առկա են ուղեծրի առնվազն 3185 գծմ հատվածում, որտեղ պատվածքի մակերեսը կազմում է 23522 քմ: 2024 թվականի վերջի դրությամբ հանձնման-ընդունման արձանագրություններով, վերը նշված պատվածքից, ընդունվել են 21641 քմ ասֆալտբետոնյա ծածկի և 22566 քմ ավազակոպճային հիմնաշերտերի կառուցման

աշխատանքներ 320,980.00 հազ. դրամի, կամ 320,980.00 հազ. դրամի 21641 քմ ճանապարհահատվածքը բեռի կարճատև ազդեցության տակ ամբողջ կոնստրուկցիայի առաձգական ճկվածքի և գրունտի ու պատվածքի հատիկային կազմ ունեցող շերտերի սահքի դիմադրության ցուցանիշներով չի համապատասխանում նորմերով սահմանվածին: Համաձայն ОДН 218.046-01-ի "Проектирование нежестких дорожных одежд" 3.3-րդ և 3.8-րդ կետերի՝ « (...) սահմանված նորմերի չպահպանելը կառաջացնեն ճանապարհածածկույթի ուղղահայաց, երկայնական և լայնական անհարթություններ, ճաքեր, փոսեր, թմբեր, նստվածքներ, ցանցաձև ճաքեր, կոտրվածքներ և այլ տեսակի դեֆորմացիաներ, և ճանապարհի շահագործման հատկությունները ինտենսիվորեն կկորեն մինչ հաշվարկներում ճանապարհի համար ընդունված օգտակար ծառայության ժամկետի ավարտը»[6]: Տվյալ դեպքում՝ նախագծի հաշվարկներում ծառայության ժամկետն ընդունվել է 14 տարի:

Նախարարության առարկությունները և բացատրությունները.

Ինչպես նշված է ճանապարհային պատվածքի հաշվարկի բացատրագրում պատվածքի կոնստրուկտավորումը և հաշվարկը իրականացվել է ըստ ОДН 218.046-01 "Проектирование нежестких дорожных одежд" ճանապարհային նորմերի: Հաշվարկի համար կիրառվել են Ճանապարհային Դեպարտամենտի կողմից տրամադրված երթևեկության ինտենսիվության տվյալները կատարված երկրաբանական հետազոտությունների արդյունքները:

Ճանապարհային պատվածքի հաստության հաշվարկը կատարվել է ըստ սահմանային առաձգական ճկվածքի, որի համար պատվածքի նյութերի հաշվարկային բնութագրերն ընդունվել են ըստ ОДН 218.046-01-ի հավելված 3-ի: Մասնավորապես, առաձգական ճկվածքի հաշվարկում ասֆալտբետոնի առաձգականության մոդուլի արժեքներն ընդունվել են ըստ П.3.3 աղյուսակի БНД 60/90 բիտումով խիտ ասֆալտբետոնի համար 100С հաշվարկային ջերմաստիճանի դեպքում կախված ասֆալտբետոնի տեսակից (բարձր խտության, խիտ, ծակոտկեն կամ բարձր ծակոտկենությամբ) և բիտումի դասից: Պատվածքի սահքակայունության հաշվարկների համար ասֆալտբետոնի առաձգականության մոդուլի արժեքներն ընդունվել են նույն աղյուսակից կախված վերը նշված պարամետրերից, բայց 400С հաշվարկային ջերմաստիճանի դեպքում, որն ընդունվել է IV ճանապարհակլիմայական գոտու համար: ОДН 218.046-01-ում բեռի երկարատև ազդեցության տակ չեն պահանջվում պատվածքի ոչ ըստ առաձգական ճկվածքի հաշվարկներ, ոչ էլ սահքակայունության ստուգումներ և աղյուսակ П.3.4 -ում բերված տվյալները, որոնք կախված են ասֆալտբետոնի տիպից (А, Б, В, Г կամ Д) հաշվարկներում չեն օգտագործվում:

---

[6] *Վերոգրյալը թարգմանված է հաշվարկների համար հիմք ընդունված «Проектирование нежестких дорожных одежд» ճանապարհային նորմերի՝ 3.3-րդ և 3.8-րդ կետերի դրույթներից:*

Ինչ վերաբերվում է 30սմ հաստությամբ գրունտի փոխարինմանը, ապա համաձայն հաստատված նախագծի՝ երկայնական կտրվածքի և երկրաբանական եզրակացության «Լիցք – Ասֆալտ, կոպիճ կավավազային լցիչով» շերտի միջին խորությունը կազմում 1,67մ և 0,66մ:

Հաշվի առնելով վերոգրյալը և նախագծի երկայնական կտրվածքը, ապա հստակ երևում է, որ նախագծով նախատեսված կարմիր գիծը ավելի բարձր է քան գոյություն ունեցող ճանապարհի նիշերը՝ 0-ից մինչև 29սմ, սակայն առկա են որոշ կարճ տեղամասեր որտեղ կարմիր գիծը ավելի ցածր է քան գոյությունը ունեցողը մինչև 6սմ հաստությամբ: Նախագծով ընտրված պատվածքի հաստությունը կազմում է ընդամենը 35սմ: Վերոգրյալ 66սմ և 167սմ գրունտի առկայությունից և ճանապարհային պատվածքի հաստությունից հստակ երևում է, որ քանդման աշխատանքներից հետո պահպանվում է գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի միջինը 31սմ հաստությունը, որը որ նաև հիմք է հանդիսացել ճանապարհային պատվածքի շերտերի տեղադրման համար:

Միաժամանակ հաշվի է առնվել, որ գոյություն ունեցող ճանապարհը արդեն աշխատել է 20 տարուց ավելի և ճանապարհի հիմնատակի գրունտը կայունացել է, իսկ կայունացած գրունտի փոխարինումը նախագծողի կողմից չի դիտարկվել որպես անհրաժեշտություն՝ նաև հաշվի առնելով, որ ուսումնասիրության փուլում չի արձանագրվել նստվածքներ:

Համաձայն երկրաբանական ուսումնասիրության գրունտային ջրերի հորիզոնը գտնվում է 5մ-ից ներքև:

Հիմք ընդունելով վերը նշվածը ճանապարհային պատվածքի համար հիմք է ընդունվել գոյություն ունեցող ճանապարհի հիմքի միջինը 29-31սմ հաստությամբ շերտ, որը համաձայն ՕԴՀ 218.046-01 Պ.2.5 աղյուսակի ընդունվել է 80ՄՊա:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Նախարարությունը չի անդրադարձել արձանագրված այն փաստին, որ կոնստրուկցիայի հաշվարկում վերին շերտի համար ընդունվել է մանրահատիկ խիտ Ա տիպի ասֆալտբետոն այնինչ ծավալաթերթում այն նշվել է Բ տիպի և համաձայն կատարողականների կառուցվել է Բ տիպի ասֆալտբետոնով: Ասֆալտբետոնի տիպը հաշվարկով կամ առանց հաշվարկի ընդունելու փաստը չի փոխում Ա և Բ տիպի ասֆալտբետոնների՝ երկարատև ազդեցության բեռի տակ հաշվարկային առաձգականության մոդուլների չափերը:

Ճանապարհային պատվածքի հիմնատակի գրունտի ուժեղացումը պետք է հաշվարկվեր ոչ թե այն տեղամասերի համար որտեղ բարենպաստ գրունտների շերտի միջին հաստությունը չի բավարարում հաշվարկում սահմանված պարամետրերին, այլ այն հատվածների համար, որտեղ բարենպաստ գրունտների շերտի հաստությունը բացարձակ չափերով չի համապատասխանում հաշվարկով սահմանված պարամետրերին: Համաձայն հաստատված նախագծի՝ երկայնական կտրվածքի և

երկրաբանական եզրակացության «Լիցք–Ասֆալտ, կոպիճ կավավազային լցիչով» շերտի նվազագույն հաստությունը կազմում է ընդամենը 0.3մ, որից 0.04մ-ը գոյություն ունեցող ասֆալտ (ՊԿ56+15, հորատանցք N 18): Հաշվարկները կատարվել են այն հատվածների համար, որտեղ նշված շերտի հաստությունը պակաս է 0.6մ-ից (0.6մ-0.35մ=0.25մ<0.3մ):

5.1.4 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշման[7] Հավելված 1-ի 108-րդ և 109-րդ կետերի և ՀՀ ֆինանսների նախարարի 2022 թվականի մայիսի 31-ի «2017 մայիսի 30-ի № 265-Ա հրամանում փոփոխություն կատարելու և 2022 թվականի մարտի 26-ի № 139-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» № 235-Ա հրամանի Հավելված 7-ի հավելված 4-ի և 5-ի պահանջների նկատմամբ:

Համաձայն որոշման Հավելված 1-ի 108-րդ և 109-րդ կետերի՝ Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի գրավոր դրական եզրակացությունը, որը տրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի վերոնշյալ հրամանի Հավելված 7-ի հավելված 4-ի և 5-ի պահանջների՝ կատարողական փաստաթղթերում արձանագրվում են փաստացի կատարված աշխատանքները:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Տ4-13, /Հ-39/ (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի կմ0+000-կմ12+900 հատվածի հիմնանորոգում» օբյեկտի՝

○ նախագծային փաստաթղթերի գծագրական ալբոմներում «Ջրնետ» համակարգի մետաղական խողովակների տեղադրման աշխատանքների նախագծեր չկան: «Ամփոփագրեր» ալբոմում առկա է 2863.53 գծմ ընդհանուր երկարությամբ մետաղական խողովակների ամփոփագիր, որտեղ խողովակի տրամագիծը չի նշվել: Ծավալաթերթի «Ջրնետներ» բաժնում նշվել է 2863.53 գծմ երկարությամբ Փ530մմ տրամագծով մետաղական խողովակների տեղադրման աշխատանքներ, որտեղ նշված չէ խողովակի պատի հաստությունը: Նույն աշխատանքը նույն ծավալով ներառվել է նաև աշխատանքների կատարման ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/40Շ պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվում, որն առանց որևէ նախագծային փոփոխության հետագայում ավելացվել է և սահմանվել է 3060.6 գծմ, գումարով՝ 216,459.00 հազ. դրամ: 2024 թվականին պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման

[7] *«Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին».*

արձանագրություններով ընդունվել է 3060.6 գծմ երկարությամբ Φ530 մմ տրամագծով մետաղական խողովակների տեղադրման աշխատանքներ՝ գումարով 216,459.00 հազ. դրամի, այն դեպքում, երբ հաշվեքննությամբ պարզվել է, որ համաձայն ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտերի, փաստացի տեղադրվել են Φ325 մմ տրամագծով մետաղական խողովակներ:

«Ամփոփագրեր» ալբոմում և ճանապարհածածկույթի կոնստրուկտիվ շերտերի կտրվածքում C-5 խճային շերտի հաստությունը սահմանվել է 15 սմ, այն դեպքում, երբ ծավալաթերթում և ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/40Շ պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվում հաստությունը ցույց է տրվել 22 սմ, որի 1 քմ-ի համար կապալառուն առաջարկել է 1880 դրամ: Հանձնման-ընդունման արձանագրություններով և կատարողական ակտերով ընդունվել են 78212 քմ 22 սմ հաստությամբ C-5 խճային շերտի պատրաստման աշխատանքներ՝ գումարով 147,038.56 հազ. դրամի (որից 2024 թվականին 54,903 քմ 103,217.64 հազ. դրամի), այնինչ համաձայն ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտերի C-5 խճային շերտը կառուցվել է 15 սմ հաստությամբ:

Նախարարության առարկությունները և բացատրությունները.

*Տեղեկացնում ենք, որ նախագծային փաստաթղթերի փաթեթում առկա է **«Ջրնետ» համակարգի մետաղական խողովակների տիպային նախագիծ: Ինչ վերաբերվում է մետաղական խողովակի տրամագծերին, ապա հայտնում ենք, որ** դրանք նշված են ծավալաթերթ – նախահաշվում: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Φ325մմ տրամագծով խողովակները նախատեսված են 6մմ պատի հաստությամբ (այն նշված է ծավալաթերթ - նախահաշվում), իսկ Φ530մմ տրամագծով խողովակները նախատեսված են 7մմ պատի հաստությամբ (այն նշված է մետաղական խողովակների նախագծի ՊԿ-ային ամփոփագրերում):*

Թեև Պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվում C-5 խճային շերտի հաստությունը նշված է 22սմ, սակայն Նախագծի ամփոփագրերում այն նշված է 15սմ, իսկ նախահաշվում հաշվարկը իրականացված է 15սմ հաստությանը համապատասխան, որը համապատասխանում է 1880դր արժեքին, հետևաբար Պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվում նշված 22սմ հաստությունը ընդամենը տեխնիկական վրիպակ է, իսկ փաստացի տեղադրված խճային շերտի 15սմ հաստությունը համապատասխանում է նախագծի «Ամփոփագրեր» ալբոմի պահանջներին: Սույն անհամապատասխանության վերաբերյալ նախագծային կազմակերպության կողմից տրվել է պարզաբանում 06.11.2023թ-ի թիվ Ն-06/11-01 գրությամբ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Թե թղթային տարբերակով և թե էլեկտրոնային նամակով հաշվեքննողներին ներկայացրած նախագծային փաստաթղթերի փաթեթը ««Ջրնետ» համակարգի

մետաղական խողովակների տիպային նախագիծ» չի պարունակել: Բացի այդ ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի «ՀՀ բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերի ու շինությունների, այդ թվում՝ գծային ենթակառուցվածքների՝ մայրուղային, երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների, գազատարների, կապի և էլեկտրամատակարարման գծերի կամ դրանց հատվածների բազմակի օգտագործման օրինակելի ճարտարապետաշինարարական նախագծերի և դրանց կատալոգների ներդրման ու կիրառման կարգը հաստատելու մասին» № 814-Ն որոշման պահանջներին համապատասխան լիազոր մարմնի ղեկավարի հրամանով հաստատված ««Ջրնետ» համակարգի մետաղական խողովակների տիպային նախագիծ» բազմակի օգտագործման օրինակելի ճարտարապետաշինարարական նախագծերի կատալոգներում չկա:

Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող ծավալաթերթ նախահաշվում ջրնետ համակարգի Փ325մմ տրամագծով խողովակների տեղադրման աշխատանքներ նախատեսված չեն:

Թե թղթային տարբերակով և թե էլեկտրոնային թե նամակով հաշվեքննողներին ներկայացրած նախագծային փաստաթղթերի ամփոփագրերում Փ530մմ տրամագծով խողովակների պատի հաստություններ նշված չեն: Այն հիմնավորող որևէ փաստաթուղթ չի տրամադրվել նաև տվյալ դեպքում Նախարարության կողմից ներկայացրած առարկություններով ու բացատրություններով:

Պետք է նշել նաև, որ վրիպակի բացահայտվելուց՝ 06.11.2023թ-ից հետո ընկած ժամանակահատվածում ընդունված տվյալ աշխատանքների կատարման կատարողականներում նույնպես նշվել է C-5 խճային շերտը 22սմ հաստությամբ:

5.1.5 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի № 128-Ն հրամանի[8] Հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի, Աղյուսակ № 9-ի 5-րդ կետի, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 9-ի № 596-Ն որոշման[9] Հավելված 1-ի 8-րդ, 73-րդ, 74-րդ կետերի պահանջների նկատմամբ:

- Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 9-ի № 596-Ն որոշման Հավելված 1-ի

[8] *«Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի եվ շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի № 273-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»*

[9] *«ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին»*

✓ 73-րդ կետի 3-րդ ենթակետի՝ Նախագծային կապալի պայմանագրին կցվում են՝ վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող օբյեկտների դեպքում նաև՝ դրանց տեխնիկական վիճակի մասին ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 274 որոշմամբ սահմանված կարգով կազմված եզրակացությունը.

✓ 74-րդ կետի՝ օբյեկտի տեխնիկական վիճակի մասին եզրակացության առկայությունը պարտադիր է շինարարության թույլտվություն պահանջող օբյեկտների (բացառությամբ գյուղական բնակավայրերի տնամերձ հողամասերում կառուցվող օժանդակ տնտեսական շինությունների) համար՝ անկախ դրանց ռիսկայնության աստիճանից:

✓ 8-րդ կետի՝ ինժեներական հետազննումը և ***<u>շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունը</u>*** կարող են կատարել միայն համապատասխան գործունեություն (քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում) իրականացնելու լիցենզիա ունեցող անձինք:

- Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի № 128-Ն հրամանի Հավելվածի

✓ 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝ վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող և արդիականացվող օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման համար հիմք են հանդիսանում նաև դրանց տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը և շենքի/շինության անձնագիրը:

✓ Աղյուսակ № 9-ի 5-րդ կետի՝ բարձր ռիսկայնության աստիճանի IV կատեգորիայի դասակարգում ունեցող օբյեկտների ելակետային նյութերի և այլ փաստաթղթերի կազմում ներառվում է նաև շենքի տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2024 թվականին «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» (1049-21002) միջոցառման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) հոդվածով 8 պայմանագրերի շրջանակներում իրականացվել է 8 կամուրջների վերականգնման աշխատանքներ՝ 1,503,610.94 հազ. դրամ գումարով (պայմանագրային ընդհանուր գինը 1,668,380.40 հազ. դրամ) և «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» (1049-21001) միջոցառման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) հոդվածով 11 պայմանագրերի շրջանակում իրականացվել է 19 կամուրջների վերականգնման աշխատանքներ՝ 211,384.00 հազ. դրամ գումարով և 3 կամուրջների քանդման աշխատանքներ, որոնց նախագծերի ելակետային տվյալներում բացակայում են լիցենզավորված կազմակերպության կողմից տրված կամուրջների տեխնիկական վիճակի մասին եզրակացությունները:

Նախարարության առարկությունները և բացատրությունները.

Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 9-ի № 596-Ն որոշման Հավելված 1-ի 73-րդ կետի 3-րդ ենթակետի՝ Նախագծային կապալի պայմանագրին կցվում են՝ վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող օբյեկտների դեպքում նաև՝ դրանց տեխնիկական վիճակի մասին ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 274 որոշմամբ սահմանված կարգով կազմված եզրակացությունը:

Հաշվի առնելով, որ S4-13, /Հ-39/ (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք տեղական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ12+900 հատվածում առկա թվով 6 հատ կամուրջներից 1 ՝ ՊԿ44+58,5-ում գոյություն ունեցող կամուրջը հիմնանորոգվել է նախագծման տարեթվից 3-4 տարի առաջ և Նախագծման փուլում նշված կամրջի վերաբերյալ որևէ ուժեղացման աշխատանք չի նախատեսվել, նախատեսված է միայն գոյություն ունեցող ա/բետոնե ծածկի նորոգման աշխատանքներ, ուստի տեխնիկական հետազննման եզրակացության անհրաժեշտություն չի եղել: Նշված եզրակացությունը նախագծողի նախաձեռնությամբ ստացվել է մնացած թվով 5 կամուրջների վերաբերյալ (կցվում են): Միաժամանակ նշենք, որ համաձայն Համայնքի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի վերը նշված նախագծի ռիսկայնության աստիճանը III աստիճանի է /ՃՀԱ թիվ 027 30 դեկտեմբեր 2021թ/:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

- *Հաշվեքննությանը ներկայացրած նախագծանախահաշվային փաստաթղթերի թղթային և էլեկտրոնային փաթեթներում (ելեկտրային տվյալներում) կամուրջների տեխնիկական վիճակի մասին սահմանված կարգով կազմված որևէ եզրակացություն չի ներկայացվել՝ այդ թվում նախագծողի նախաձեռնությամբ ստացված:*

Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 9-ի № 596-Ն որոշման Հավելված 1-ի

- *73-րդ կետի 3-րդ ենթակետի՝ կառույցի տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը նախագծային փաստաթղթեր մշակող կապալառուին տրամադրում է պատվիրատուն:*
- *78-րդ կետի՝ նախագծողը կարող է **պայմանագրով ամրագրված պայմանների համաձայն** հավաքել սույն կարգի 73-րդ կետի 3-րդ ու 4-րդ ենթակետերում նշված և կառուցապատողի տեխնիկական բնութագրում նշված լրացուցիչ պայմանների (առկայության դեպքում) կատարման համար անհրաժեշտ ելեկտրային փաստաթղթերը (ներառյալ՝ վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող օբյեկտների դեպքում նաև՝ դրանց տեխնիկական վիճակի մասին սահմանված կարգով կազմված եզրակացությունը):*

«Պետության կարիքների համար նախագծերի պատրաստման և ծառայությունների մատուցման պետական գնման» № ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2021/14Ն-2

պայմանագրով չի նախատեսվել նախագծողի կողմից ելակետային փաստաթղթերի հավաքման պայման:

Նախագծման փուլում և հաշվեքննությամբ ընդգրկված ժամանակահատվածում առարկություններում նշված նախագծողի նախաձեռնությամբ ստացված տեխնիկական հետազննման եզրակացության՝ որպես նախագծային աշխատանքների համար անհրաժեշտ ելակետային փաստաթղթի գոյություն ունենանալու փաստը չի հիմնավորվում նաև նախագծային փաստաթղթերով և փորձագիտական եզրակացությամբ: Մասնավորապես, համաձայն

- *ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի № 128-Ն հրամանի հավելվածի IV-րդ գլխի՝ «Նախագծային փաստաթղթերի կազմը մեկ և երկու փուլերով մշակման դեպքում» 5-րդ կետի՝ ««Նախագիծ» փուլի նախագծային փաստաթղթերի բաժինների կազմը և բովանդակությունը» 1-ին ենթակետի՝ «Ընդհանուր բացատրագիր» «…Ընդհանուր բացատրագրում ներառվում են՝ նախագծի մշակման հիմքը, սույն կանոնների V բաժնում նշված նախագծման ելակետային տվյալներն և փաստաթղթերը,…»*
- *Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 9-ի № 596-Ն որոշման Հավելված 2-ի 31-րդ կետի՝ Մշակված քաղաքաշինական փաստաթղթերի հետ միասին փորձաքննության ներկայացվում են նախագծման համար հիմք հանդիսացող՝ սույն կարգի 73-րդ կետի 3-րդ ու 4-րդ ենթակետերում նշված ելակետային փաստաթղթերն ու օբյեկտի նախագծման տեխնիկական պայմանները կամ ելակետային տվյալները:*

Նախագծային փաստաթղթերի «Ընդհանուր բացատրագիր» բաժնում և նախագծանախահաշվային փաստաթղթերի 01.08.2022 թվականին և 11.12.2024 թվականին տրված փորձաքննության եզրակացություններում նշված ելակետային փաստաթղթերի ցանկում որևէ հղում առարկությունում նշված նախագծողի նախաձեռնությամբ ստացված տեխնիկական հետազննման եզրակացությանն առկա չէ:

Ըստ ռիսկայնության աստիճանի օբյեկտները դասակարգված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի № 596-Ն որոշմամբ:

5.1.6 Առկա է անհամապատասխանություն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 24-ի № 87-Ն հրամանի[10] Հավելվածի

[10] *«ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. հիմնական դրույթներ» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի № 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին»*

6-րդ կետի, 7-րդ կետի և Հավելված 1-ի աղյուսակ 1-ի VI-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների նկատմամբ:

- Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 24-ի № 87-Ն հրամանի Հավելվածի 6-րդ կետի, 7-րդ կետի,

✓ 7-րդ կետի՝ շենքերի կամ կառուցվածքների կոնստրուկցիաների վնասվածության կամ ֆիզիկական մաշվածության աստիճանը և հետագա շահագործման հնարավորությունը որոշելու նպատակով, պետք է կատարվի դրանց տեխնիկական վիճակի ու կրողունակության գնահատում:

✓ 6-րդ կետի՝ Օբյեկտի վերակառուցման նպատակն ու մակարդակը և հետագա շահագործման նախանշվող ժամկետը որոշում է պատվիրատուն, ելնելով հետազննության արդյունքներից, ինչը նշվում է նախագծման առաջադրանքում՝ սույն շինարարական նորմերի Հավելված 1-ի պահանջների հաշվառումով:

✓ Հավելված 1-ի (**Շենքերի և կառուցվածքների սեյսմազինվածության նվազագույն թույլատրելի մակարդակը, կախված դրանց գործառնական նշանակությունից ու կարևորության աստիճանից)**, աղյուսակ 1-ի VI-րդ կետի 1-ին ենթակետի՝ երկաթուղիների, ընդհանուր ցանցի ***<u>I և II կատեգորիաների ճանապարհների</u>***, քաղաքային ճեպընթաց ճանապարհների և համաքաղաքային մայրուղիների ***<u>կամուրջների,</u>*** արհեստական կառուցվածքների (թունելներ, գետնանցումներ, էստակադներ, ուղանցույցներ) վերակառուցման նվազագույն թույլատրելի մակարդակը սեյսմազինվածության բարձրացումն է:

✓ 2-րդ կետի՝

○ 2-րդ ենթակետի՝ սեյսմազինվածության բարձրացումը շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր է ուղղված շենքի կամ կառուցվածքի վերակառուցման միջոցով սեյսմազինվածության մակարդակի բարձրացմանը:

- Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի **№** 28-Ն հրամանի Հավելվածի 1.4.՝ «ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ» բաժնի

✓ 7-րդ կետի՝ ավտոմոբիլային ճանապարհները դասակարգվում են սպառողական հատկանիշներով, դրանցով երթևեկության պայմաններով և դեպի այդ ճանապարհներն ավտոմոբիլների հասանելիությամբ, ինչպես նաև վարչական և **գործառութային** նշանակությամբ:

✓ 10-րդ կետի՝ **գործառնական** դասակարգումը ենթադրում է ավտոմոբիլային ճանապարհների միավորումը ֆունկցիոնալ դասերի մեջ՝ կախված ճանապարհների ցանցի կազմում դրա ունեցած դերից՝

1. մայրուղային ավտոմոբիլային ճանապարհները ապահովում են մեծ արագությամբ ուղևորությունները մեծ հեռավորությունների վրա,

2. բաշխիչ ավտոմոբիլային ճանապարհները ապահովում են տրանսպորտային հոսքերի վերաբաշխումը մայրուղային և տեղական ճանապարհների միջև,

3. տեղական ավտոմոբիլային ճանապարհներն ապահովում են կապը համայնքների միջև, ինչպես նաև ընդհանուր օգտագործման այլ ճանապարհների հետ:

✓ Աղյուսակ 2-ի

- մայրուղային ավտոմոբիլային ճանապարհները միջպետական նշանակության ճանապարհներն են
- Բաշխիչ ավտոմոբիլային ճանապարհները հանրապետական նշանակության ճանապարհներն են
- Տեղական ավտոմոբիլային ճանապարհները մարզային (տեղական) ճանապարհներն են:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ որ 2024 թվականին «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» (1049-21002) միջոցառման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) հոդվածով 6 պայմանագրերի շրջանակներում իրականացվել է միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների վրա գտնվող 6 կամուրջների վերականգնման աշխատանքներ 1,361,051.00 հազ. դրամ գումարով (պայմանագրային ընդհանուր գինը 1,492,820.00 հազ. դրամ) և «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» (1049-21001) միջոցառման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) հոդվածով 7 պայմանագրերի շրջանակում 15 կամուրջների վերականգնման աշխատանքներ 132,607.0 հազ. դրամ գումարով, որոնց տեխնիկական վիճակի և կրողունակության գնահատում չի կատարվել, վերակառուցման նպատակն ու մակարդակը և հետագա շահագործման նախանշվող ժամկետը պատվիրատուի կողմից չի որոշվել, նախագծման առաջադրանքում այդ մասին չի նշվել և չի ապահովվել վերակառուցման նվազագույն թույլատրելի մակարդակը՝ սեյսմազինվածության բարձրացումը:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները

«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Ճանապարհի վերակառուցումը ճանապարհի շինարարական աշխատանքների ամբողջություն է, որի ընթացքում կատարվող աշխատանքների արդյունքով փոխվում են ավտոմոբիլային ճանապարհի, դրա հատվածների պարամետրերը, և որը հանգեցնում է ավտոմոբիլային ճանապարհի նշանակության և կարգի կամ դրանցից մեկի փոփոխությանը, կամ որի արդյունքով փոփոխվում են ճանապարհի օտարման շերտի չափերը.

ճանապարհի հիմնանորոգումը ավտոմոբիլային ճանապարհի, արհեստական կառույցների կամ դրանց մասերի կառուցվածքային տարրերի փոխարինման կամ վերականգնման աշխատանքների ամբողջություն է, որի իրականացմամբ պահպանվում են ճանապարհի համար նախկինում սահմանված նշանակության կամ կարգի

պարամետրերը և տեխնիկական բնութագրերը, և որի իրականացման արդյունքով ապահովվում են ճանապարհի հուսալիության և անվտանգության կառուցվածքային և այլ բնութագրերի պահանջները, և փոփոխության չեն ենթարկվում ճանապարհի օտարման շերտի չափերը.

Նշված 6 կամուրջներից՝ 5-ի փլուզման պատճառով հրատապության կարգով ձեռնարկվել է անհրաժեշտ միջոցներ երթևեկության անընդհատությունը հնարավորինս սեղմ ժամկետում վերականգնման համար:

Իսկ մնացած կամուրջների մասով իրականացվել են հիմնանորոգման աշխատանքներ, որոնց արդյունքում պահպանվել են կամուրջի համար նախկինում սահմանված հիմնական պարամետրերը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

*ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 24-ի № 87-Ն հրամանի իմաստով հիմնական նորոգումը դա **վերակառուցման սահմանման տակ չընկնող** շենքի կամ կառուցվածքի հիմնական ֆիզիկատեխնիկական, ճարտարապետագեղարվեստական, պատմական և գործառնական նշանակության վերականգնմանն ուղղված միջոցառումների համալիր է, անհրաժեշտության դեպքում առանձին կոնստրուկտիվ տարրերի և ինժեներական հաղորդակցուղիների ու սարքավորումների փոխարինումով, ինչպես նաև շահագործողական ցուցանիշների բարելավումով:*

*«Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի իմաստով ճանապարհների հիմնանորոգումը համապատասխանում է ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 24-ի № 87-Ն հրամանի իմաստով **վերականգնմանը,** որը վերակառուցման մակարդակ է: Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 24-ի № 87-Ն հրամանի Հավելվածի*

*- 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝ **վերականգնումը** շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր է, ուղղված շենքի կամ կառուցվածքի կոնստրուկտիվ տարրերի վնասվելուն նախորդող սեյսմակայունության մակարդակի և շահագործողական ցուցանիշների ապահովմանը:*

- 5-րդ կետի՝ վնասված շենքերի կամ կառուցվածքների վերակառուցումը կարող է ունենալ հետևյալ մակարդակները.

1) կոնստրուկցիայի վնասվելուն նախորդող վիճակի վերականգնում,

2) սեյսմազինվածության նախնականից բարձր մակարդակին հասցնելը,

3) կրող կոնստրուկցիաների ուժեղացում՝ գործող շինարարական նորմերին համապատասխան:

*- Աղյուսակ 1-ի VI-րդ կետի 1-ին ենթակետի՝ ընդհանուր ցանցի I և II կատեգորիաների ճանապարհների կամուրջների **<u>վերակառուցման նվազագույն թույլատրելի մակարդակը սեյսմազինվածության բարձրացումն է</u>**:*

Կամուրջների տեխնիկական վիճակի և կրողունակության չգնահատելու, վերակառուցման նպատակն ու մակարդակը և հետագա շահագործման նախանշվող ժամկետը չորոշելու և նախագծման առաջադրանքում չնախատեսելու արդյունքում՝ երթևեկության անընդհատությունը վերականգնելու հիմնավորմամբ, չի պահպանվել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 24-ի № 87-Ն հրամանի 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝ վերականգնումը շինարարական աշխատանքների և միջոցառումների համալիր է, ուղղված շենքի կամ կառուցվածքի կոնստրուկտիվ տարրերի վնասվելուն նախորդող սեյսմակայունության մակարդակի և շահագործողական ցուցանիշների ապահովմանը դրույթի պահանջը:

5.1.7 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 9-ի № 596-Ն որոշման[11] Հավելված 1-ի 16-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջի նկատմամբ:

- Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 9-ի № 596-Ն որոշման Հավելված 2-ի 16-րդ կետի 3-րդ ենթակետի՝ № 4 հավելվածի № 3 ցանկով սահմանված բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող կարևորագույն (այդ թվում՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևոր) նշանակություն ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերը ենթակա են պետական համալիր փորձաքննության:
- Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 9-ի № 596-Ն որոշման Հավելված 2-ի 14-րդ կետի՝ Պետական համալիր փորձաքննությունն իրականացվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ համապատասխան փորձագիտական և (կամ) սույն կարգի 13-րդ կետում նշված համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ պետական մարմինների (այսուհետ՝ շահագրգիռ մարմիններ) մասնակցությամբ:
- Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի նոյեմբերի 30-ի «Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները սահմանելու մասին» № 1243-Ն հրամանի Հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևոր նշանակության օբյեկտների թվին են դասվում նաև տրանսպորտային օբյեկտները (կամուրջներ, ուղեանցեր և այլն):

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2024 թվականին «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» (1049-21002) միջոցառման «Շենքերի և շինությունների կապիտալ

[11] *«ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին»*

վերանորոգում» (511300) հոդվածով 8 պայմանագրերի շրջանակներում իրականացված 8 կամուրջների վերականգնման՝ 1,503,610.94 հազ. դրամ գումարով աշխատանքների (պայմանագրային ընդհանուր գինը 1,668,380.40 հազ. դրամ) և «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» (1049-21001) միջոցառման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» (511300) հոդվածով 11 պայմանագրերի շրջանակում իրականացված 19 կամուրջների՝ 211,384.00 հազ. դրամ գումարով վերականգնման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը չեն ենթարկվել պետական համալիր փորձաքննության:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները.

Հիմնանորոգվող ճանապարհին առկա նշված «կամուրջները» հանդիսացել են ճանապարհի կոնստրուկտիվ տարր և ճանապարհի հետ միասին, որպես մեկ ամբողջական օբյեկտ, դիտարկվել են որպես 3-րդ կատեգորիայի ռիսկայնության աստիճանի օբյեկտ, որոնք ըստ գործող կարգի ենթակա չեն պետական համալիր փորձաքննության:

Ընդ, որում այդ կամուրջները ընդամենը հիմնանորոգվել են, այլ ոչ թե վերակառուցվել:

Հաշվեքննողների մեկնաբանությունը:

- *Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի 28-Ն հրամանի Հավելվածի 5-րդ կետի 27-րդ ենթակետի ճանապարհի կոնստրուկտիվ տարրերն են՝ հողային պաստառի հիմքը, հողային պաստառը, ճանապարհային պատվածքը, ջրահեռացման, պահող և ամրացնող տարաբնույթ կոնստրուկտիվ տարրերը:* ***Կամուրջը չի հանդիսանում ճանապարհի կոնստրուկտիվ տարր****: Համաձայն «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ կամուրջը ճանապարհային ենթակառուցվածքի՝ ճանապարհային ֆիզիկական ակտիվների համակարգի ամբողջության տարր է, ինչպես օրինակ ճանապարհային ծառայության շինությունները:*

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 22-ի N 11-Ն հրամանի հավելվածի 5-րդ կետի 10-րդ ենթակետի՝ կամրջային կառույցը բնական և արհեստական խոչընդոտների վրայով տրանսպորտի, հետիոտների, անասունների կամ դրանց տարբեր համակցությունների, ինչպես նաև ջրհոսքերի, սելավների տեղափոխումը ապահովող արհեստական կառույց է:

Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 9-ի № 596-Ն որոշման Հավելված 2-ի 16-րդ կետի 3-րդ ենթակետի և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի նոյեմբերի 30-ի № 1243-Ն հրամանի Հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝ կամուրջները բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտներ են և դրանց նախագծային փաստաթղթերը ենթակա են պետական համալիր փորձաքննության:

- *Հիմնանորոգման վերաբերյալ հաշվեքննողների մեկնաբանությունը ներկայացված է սույն բաժնի 5.1.6-րդ կետում:*

5.1.8 Առկա է անհամապատասխանություն 16.11.2021թ.-ի «Պետության կարիքների համար նախագծերի պատրաստման և ծառայությունների մատուցման պետական գնման» № ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2021/14Ն-2 պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և ԳՕՍ 33179-2014-ի 3.20-րդ կետի պահանջի նկատմամբ:

Համաձայն նշված պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ նախագծողի հիմնական պարտականություններից է ԳՕՍ 33179-2014-ի պահանջներին համապատասխան ինժեներական հետազննման աշխատանքների իրականացումը, որը պետք է իրականացվի նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով: Նախագծերի մեջ պետք է նախատեսել արհեստական կառուցվածքների վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության):

Համաձայն ԳՕՍ 33179-2014-ի 3.20 կետի՝ ինժեներական հետազննումը դա հիմնավորված նախագծային լուծումներ ընդունելու համար անհրաժեշտ ելակետային տվյալներ ստանալու նպատակով նախագծվող կամրջի տարածքի և նրան հարող տարածքի բնական և տեխնածին պայմանների համապարփակ ուսումնասիրության գործընթացը է:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ առանց սահմանված կարգով ինժեներական հետազննության իրականացման, նախագծով նախատեսվել է գոյություն ունեցող կամրջի քանդում և ստորգետնյա կառույցի կառուցում: Մասնավորապես՝ № ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2021/14Ն-2 պայմանագրի շրջանակում «Տ4-13, /Հ-39/ (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի կմ0+000-կմ12+900 հատվածի հիմնանորոգում» օբյեկտի նաշագծանախահաշվային փաստաթղթերի «Ամփոփագիր» ալբոմի «Բացատրագիր» բաժնում, նշվել է, որ «*...Կամուրջների տակերը լցված են ամբողջությամբ, լուսավոր բացվածը կազմում է մոտ 0.3-0.4 մ: Ուսումնասիրություն հնարավոր չէ իրականացնել:* ***Այդ իսկ պատճառով նախագծով նախատեսվում է քանդել գոյություն ունեցող կամուրջը և փոխարենը կառուցել ստորգետնյա կառույց*** *համաձայն մանրամասն նախագծով: Սակայն մինչև աշխատանքներն իրականացնելն անհրաժեշտ է իրականացնել գոյություն ունեցող կամուրջի հունի մաքրում և հեղինակային հսկողության, Տեխնիկական հսկողության և Պատվիրատուի ներկայացուցչի ևս մեկ անգամ իրականացնել ուսումնասիրություն:* ***Ուսումնասիրության և նոր եզրակացության հիման վրա կտրվի վերջնական կարծիք****: Կամուրջի քանդման աշխատանքները թույլատրվում է միայն հունի մաքրումից հետո, այլապես հակառակ*

դեպքում կամրջի քանդման և կառուցման աշխատանքները կիրականցվի կապալառուի հաշվին:...»:

Չունենալով օրենքով սահմանված կարգով լիցենզավորված կազմակերպության կողմից կառույցի տեխնիկական վիճակի մասին տրված եզրակացություն, նախագծանաշահաշվային փաստաթղթերով, առանց ԿՄ 7+827.3-ում գոյություն ունեցող կամրջի քանդման աշխատանքների նախատեսման, այդ ԿՄ-ում գոյություն ունեցող կամրջի տեղը նախագծվել է երկու հատ 3.0մx5.0մ կտրվածքի չափերով, 20 գծմ երկարությամբ երկաթբետոնյա ուղղանկյուն խողովակների կառուցում 128,027.27 հազ. դրամ նախահաշվային արժեքով:

Շինարարության ընթացքում կապալառուն 2024թ. մարտի 27-ին գրությամբ դիմել է պատվիրատուին նշելով, որ հունի մաքրման և հիմքերի բացման աշխատանքներից հետո կամուրջում տեսանելի չեն քայքայումներ ու ճաքեր և առաջարկել է կատարել հավելյալ ուսումնասիրություն և հնարավորության դեպքում պահպանել կամուրջը:

Պատվիրատուն՝ համապատասխան գործունեության լիցենզիա ունեցող կազմակերպությունից կամրջի տեխնիկական վիճակի մասին եզրակացություն ստանալու փոխարեն, դիմել է նախագծային կազմակերպությանը նշելով, որ նոր լուծումների դեպքում ներկայացնեն հիմնավորումներ, եզրակացություններ, առաջարկություններ, նախագծեր, ծավալների ամփոփագրեր և նախահաշվային արժեքներ:

Նախագծային կազմակերպությունը, ակնադիտական ուսումնասիրության արդյունքում, 2024թ. մայիսի 16-ի գրությամբ, չունենալով քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցման լիցենզիա, պատասխանել է, որ քանդման փոխարեն հնարավոր է իրականացնել գոյություն ունեցող կամրջի ուժեղացում: Գրությանը կից, պատվիրատուի կողմից պահանջած որևէ հիմնավորում, եզրակացություն, նախագիծ, ծավալների ամփոփագրեր և նախահաշիվ չի ներկայացվել:

Հաշվեքննությանը ներկայացվել է Նախարարության փաստաթղթաշրջանառության համակարգում չհաշվառված, փորձաքննություն չանցած, գոյություն ունեցող «կամրջի» նորոգման գծագիր և ծավալների ամփոփ: Համաձայն գծագրի՝ գոյություն ունեցող «կամուրջը» ունի զույգ ուղղանկյուն խողովակների տեսք, 12 գծմ երկարությամբ և յուրաքանչյուրը 4.8 մ լայնությամբ: Գծագրով նախատեսվել է հիմնականում ծածկի վերանորոգում և հատակում բետոնե վաքի կառուցում: Ընդ որում ծածկի վերանորգման ծավալում 4սմ հաստությամբ ամրանային ցանցով բետոնե պաշտպանիչ շերտի ծավալը 3.9 խմ-ի փոխարեն հաշվարկվել է 135 խմ:

Չնայած վերոգրյալին, 2024 թվականի մայիսի 27-ին կնքված կապալային աշխատանքների կատարման պետական գնման № ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/40Շ պայմանագրի Համաձայնագիր թիվ 2-ում ներառվել են 3.0մx5.0մ կտրվածքի չափերով,

20 գծմ երկարությամբ երկաթբետոնյա ուղղանկյուն խողովակների կառուցման աշխատանքները, սակայն ծածկված աշխատանքների ընդունման ակտերով, աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրություններով և կատարողական ակտերով այն չի հաշվարկվել և վճարվել:

2024 թվականի դեկտեմբերի 24-ին կնքվել է կապալային աշխատանքների կատարման պետական գնման № ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/40Շ պայմանագրի Համաձայնագիր թիվ 3-ը, որի գործողությունը տարածել են 2024 թվականի նոյեմբերի 21-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա, որում նորից ներառվել են 3.0մx5.0մ կտրվածքի չափերով, 20 գծմ երկարությամբ երկաթբետոնյա ուղղանկյուն խողովակների կառուցման աշխատանքները:

Համաձայնագիր թիվ 3-ի շրջանակում կազմված 2024 թվականի դեկտեմբերի 25-ի № 7 հանձնման-ընդունման արձանագրությամբ և կատարողական ակտով հաշվարկվել է 3.0մx5.0մ կտրվածքի չափերով զույգ երկաթբետոնյա ուղղանկյուն խողովակների կառուցման աշխատանքներ **82,306.13 հազ. դրամ գումարով**, փոփոխելով՝ նվազեցնելով խողովակների մարմնի երկաթբետոնի նախագծային ծավալը, որը հաշվարկված էր 20 գծմ երկարությամբ խողովակի համար, այն համապատասխանեցնելով գոյություն ունեցող կառույցի երկարության՝ 12 գծմ երկարության հաշվարկի դեպքում ստացվող ծավալին: Ընդ որում, չեն նախագծվել և հանձնման-ընդունման արձանագրություններով և կատարողական ակտերով չեն հաշվարկվել ուղղանկյուն կտրվածքով երկաթբետոնյա միաձույլ խողովակները կառուցելու համար անհրաժեշտ գոյություն ունեցող կառույցի քանդման, շրջանցիկ ճանապարհի կառուցման և գետի հունի տեղափոխման աշխատանքներ:

Բացի այդ, համաձայն նախագծային աշխատանքների պայմանագրի Հավելված 1-ի «Հետազննման վերաբերյալ պահանջներ» բաժնի 3-րդ պարբերության նախագծողը հետազննման ընթացքում պետք է իրականացնի հիմնանորոգվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում: Ներկայացրած տեսանկարահանումներում բացակայում են կամուրջների տեսանկարահանումները:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները

Հայտնում ենք, որ կամուրջների վերաբերյալ առկա է տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն: Միաժամանակ ավելացնենք, որ «Ուսումնասիրության և նոր եզրակացության հիման վրա կտրվի վերջնական կարծիք» նախադասությունից հետո տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ նշված է նաև.

- *Ծառայության ժամկետը գրեթե սպառված է /մինչև 70տարի/ ,*
- *Նշվում է նաև - կամուրջները իրականացված են 7 բալ ուժգնության սեյսմիկ ազդեցությունների ամրության և կայունության հաշվարկով,*
- *Դրանք նախագծված են հին շահագործման տեխնիկական պայմանների հաշվարկով՝ փոքր ինտենսիվության և փոքր բեռնվածությամբ բեռնատարներ,*

Հավելյալ նշված է .

" Հենարանային համակարգը բերել և համապատասխանեցնել գործող նորմերին ու շահագործման տեխնիկական պահանջներին,

" Ապամոնտաժել թռիչքային կառուցվածքները և փոխարինել նորով,

" Կազմակերպել ավտոմոբիլային և հետիոտնային նոր երթուղիներ:

Հաշվի առնելով տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացության ցուցումները նախագծային աշխատանքները իրականացվել են ըստ համապատասխանի՝ հնարավորիս ապահովելով կամուրջների ուժեղացումը, միաժամանակ շինարարության փուլում ակտիվ հետևելով դրանց իրականացման հնարավորությանը: Սակայն ներքոբերված պարզաբանվում է /կետ1/ .

Հաշվի առնել վերը նշվածը և այն հանգամանքը, որ տվյալ կառույցները իրականացվել են 1960-ական թվականներին, ուստի.

1. Համաձայն ներկայիս գործող նորմատիվային պահանջների տվյալ տարածաշրջանում՝ 2-րդ սեյսմիկ գոտի, գրունտների սպասվելիք արագացումների մեծությունը A=0.4g, որը ենթադրում է որ կառույցը պետք է դիմակայի 9 բալ ուժգնության սեյսմիկ ազդեցությունների: Համաձայն եզրակացության կամուրջները նախագծվել են СН200-62 ԽՍՀՄ ժամանակաշրջանում գործող նորմատիվային պահանջներին, իսկ թռիչքային կառուցվածները իրականացված են լավագույն դեպքում 1950-1960-ական թվականների տիպային նախագծերի համաձայն՝ առանց որևէ սեյսմիկ ազդեցություն հաշվի առնող նորմատիվային փաստաթղթերի: Միաժամանակ նշենք, որ գոյություն ունեցող կամուրջների հիմքերի խորությունները պետք է լիներ ոչ պակաս քան 2մ-ը, սակայն հունի մաքրման աշխատանքների ժամանական պարզվեց, որ գոյություն ունեցող կամուրջների ափային հենարանները չունեն համապատասխան խորություն, ավելացնենք նաև որ գոյություն ունեցող կամուրջների հիմքերի խորությունը փոքր էր 0,5մ-ից:

2. Ավելացնենք նաև, որ նախագծային աշխատանքների ժամանակ հնարավորություն չի եղել բացել գոյություն ունեցող կամուրջների հիմքերը, որը նշված է եղել բացատրական մասում, և ավելորդ գումարներ չնախատեսելու համար հնարավորիս նախատեսվել է գոյություն ունեցող կամուրջների ուժեղացման աշխատանքներ, որը ընդունվել է փորձաքննության փուլում և նախագծի ընդունման փուլում:

Արձանագրության մեջ ներառված «Շինարարության ընթացքում արձանագրել են, որ վերը նշված 5 կամուրջներից 2-ը ամրացման ենթակա չեն և նախատեսել են դրանց քանդում և նորերի կառուցում, ինչի արդյունքում առաջացել է նախագծային շեղում 144,391.92 հազ. դրամի չափով հետևաբար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ մատուցած «Պ...» ՍՊԸ-ից և փորձաքննության ծառայություն մատուցած «Է. Ս. Է. Գ.» ՍՊԸ-ից յուրաքանչյուրը պետք է տուգանվեր

նախագծային շեղման 25%-ի չափով՝ 39,097.75 հազ. դրամով, ընդամենը 72,195.50 հազ. դրամով, ինչը չի կատարվել:» շեղում չի համարվում: Նախագծի տեխնիկական առաջադրանքի մեջ նշված չի եղել կամուրջների վերաբերյալ տեխնիկական եզրակացության ձեռբերում: Նշված է «արհեստական կառուցվածքների վերականգնում / վերակառուցում / նորոգում / կառուցում (ըստ անհրաժեշտության)»,

Հիմք ընդունելով տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը և տեղում իրականացված ուսումնասիրությունը նախագծային կազմակերպությունը չի խախտել «Ա...-11» ՍՊ ընկերության կողմից տրված տեխնիկական վիճակի մասին երզակացության պահանջները, մասնավորապես.

" Հենարանային համակարգը բերել և համապատասխանեցնել գործող նորմերին ու շահագործման տեխնիկական պահանջներին,

" Ապամոնտաժել թռիչքային կառուցվածքները և փոխարինել նորով,

Այն ինչ վերաբերվում է Կապալառուի կողմից ներկայացված գրությանը, որտեղ նշված է հետևյալը՝ «հունի մաքրման և հիմքերի բացման աշխատանքներից հետո կամուրջում տեսանելի չեն քայքայումներ և ճաքեր և առաջարկել է կատարել հավելյալ ուսումնասիրություն և հնարավորության դեպքում պահպանել կամուրջը», ապա դա կապալառուի սուբյեկտիվ կարծիքն է և այն կարող է չհամընկնել նախագծային կազմակերպության մասնագիտական կարծիքի հետ: Սույնով որոշվել է հետևել տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացության դրույթներին և հաստատված նախագծի պահանջներին՝ կատարելով 5.0x3.0մ չափերով խողովակի երկարության կրճատում՝ ելնելով տեղանքի իրավիճակից:

Վերոնշյալի արդյունքում խնայվել է շուրջ 42,942 հազ դրամ:

Ինչ վերաբերվում է այն գրությանը, որ նախագծային կազմակերպությունը տվել է Պատվիրատուին՝ վկայելով, որ տվյալ կամուրջը հնարավոր է ուժեղացնել և դրան կից ներկայացրել է ուժեղացման նախագիծ, ապա տեղեկացնում ենք, որ քանի որ տրամադրված նախագծով իրականացվել է 5.0x3.0մ չափերով խողովակի երկարության կրճատում, հետագայում նամակում կատարվել է շտկում, որով արձանագրվել է,որ կամուրջը հնարավոր չէ ուժեղացնել՝ հաշվի առնելով գործող նորմատիվային պահանջները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Տեխնիկական վիճակի մասին եզրակացության վերաբերյալ հաշվեքննողների մեկնաբանությունները ներկայացված են սույն եզրակացության 5.1.5-րդ կետում: Ավելացնենք, որ նույնիսկ այդ տեխնիկական վիճակի մասին եզրակացությունում նախատեսված չէ ԿՄ7+827.3-ում գոյություն ունեցող կամրջի քանդում և ուղղանկյուն երկաթբետոնյա խողովակների կառուցում:

Կամրջի ուժեղացման աշխատանքների նորմատիվային պահանջները կամրջի երկարությունից կախված փոփոխման ենթակա չեն:

5.1.9 Առկա է անհմապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշման[12] Հավելված 1-ի 11-րդ, «Պետության կարիքների համար նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների մատուցման պետական գնման» № ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2021/14Ն-2 պայմանագրի 2.4.4-րդ և «Պետության կարիքների համար փորձաքննության ծառայությունների մատուցման պետական գնման» № ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2022/1Փ-1 պայմանագրի 2.4.4-րդ կետերի պահանջի նկատմամբ:

Համաձայն Հավելված 1-ի 11-րդ կետի և № ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2021/14Ն-2 պայմանագրի 2.4.4-րդ կետի՝ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին:

Համաձայն № ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2022/1Փ-1 պայմանագրի 2.4.4-րդ կետի՝ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծային փաստաթղթերը քաղաքաշինական փորձաքննության ենթարկած անձը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ համաձայն № ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2021/14Ն-2 պայմանագրի շրջանակում նախագծող ընկերության կողմից կազմված «Տ4-13, /Հ-39/ (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի կմ0+000-կմ12+900 հատվածի հիմնանորոգում» օբյեկտի նախագծային փաստաթղթերի («Ամփոփագրեր» ալբոմի «Բացատրագիր» բաժնի «Գոյություն ունեցող կամուրջներ» ենթաբաժնի) ճանապարհին առկա կամուրջներից՝

« … - մեկի տակը լցված է ամբողջությամբ, լուսավոր բացվածքը կազմել է մոտ 0.3-0.4 մ: Ուսումնասիրություն հնարավոր չի եղել իրականացնել: Այդ իսկ պատճառով

[12] *«Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»*

նախագծով նախատեսվել է քանդել գոյություն ունեցող կամուրջը և փոխարենը կառուցել ստորգետնյա կառույց համաձայն նախագծի:

- թվով 5 հատ կամուրջներում հնարավոր է եղել իրականացնել ուսումնասիրություն: Դրանց վիճակը գնահատվել է բավարար, սակայն անհրաժեշտություն է առաջացել կատարել որոշ ուժեղացման աշխատանքներ: Նախատեսվել է իրականացնել հունի մաքրման և ամրացման աշխատանքներ և մանրամասները ներկայացվել են աշխատանքային նախագծում ...»:

Շինարարության ընթացքում Նախարարությունը, նախագծողը և կապալառուն արձանագրել են, որ վերը նշված 5 կամուրջներից 2-ը ամրացման ենթակա չեն և նախատեսել են դրանց քանդում և նորերի կառուցում, ինչի արդյունքում առաջացել է նախագծային շեղում 144,391.92 հազ. դրամի չափով, հետևաբար, համաձայն պայմանագրի 2.4.4-րդ կետի պահանջի, նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման, ինչպես նաև փորձաքննության ծառայություններ մատուցած ընկերություններից յուրաքանչյուրը պետք է տուգանվեր նախագծային շեղման 25%-ի չափով՝ 39,097.75 հազարական դրամով, ընդամենը 72,195.50 հազ. դրամի չափով, ինչը չի կատարվել:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները

Նախագծով ի սկզբանե սահմանված է եղել թվով 5 կամուրջների հիմնանորոգում, սակայն հաշվի առնելով, որ կամուրջների փակերը լցված են եղել և մանրակրկիտ ուսումնասիրություն հնարավոր չի եղել իրականացնել, հունի մաքրումից հետո պարզ է դարձել, որ ծավալաթերթում նշված ՊԿ 87+41,8 և ՊԿ և ՊԿ 44+58 կամուրջները շահագործման ենթակա չեն: Ուսումնասիրությունների արդյունքում որոշում է կայացվել քանդել վերոնշյալ կամուրջները՝ փոխարինելով այն նոր կամուրջներով:

ՊԿ 78+27 ում գտնվող կամուրջի փոխարեն կառուցվել է ե/բ խողովակ:

Նշենք նաև, որ հաշվի առնելով, որ կատարված փոփոխությունները չեն գերազանցում պայմանագրով և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշման հավելվածի 56-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված սահմանաչափերը, ուստի չեն կիրառվել նույն Հավելվածի 33-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշման հավելվածի Հավելվածի 56-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջները չեն առնչվում 33-րդ կետի 11-րդ ենթակետի պահանջներին և վերջինիս կիրառումը կապակցված չէ այդ ենթակետերի պահանջների հետ:

5.1.10 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 9-ի «ՀՀ կառուցապատման նպատակով

թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» № 596-Ն որոշման Հավելված 1-ի 4-րդ կետի, Հավելված 2-ի 2-րդ, 31-րդ, 33-րդ, 35-րդ, 41-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջների նկատմամբ:

- Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 9-ի № 596-Ն որոշման

✓ Հավելված 1-ի 4-րդ կետի 20-րդ ենթակետի՝ քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը (փորձագիտական եզրակացությունը) դա նախագծային փաստաթղթերով ընտրված լուծումների՝ ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանության վերաբերյալ լիցենզավորված կազմակերպության կողմից տրվող եզրակացությունն է.

✓ Հավելված 2-ի

○ 2-րդ կետի՝ փորձաքննության հիմնական նպատակն ընտրված նախագծային լուծումների՝ ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանության ապահովումն է:

○ 31-րդ կետի՝ մշակված քաղաքաշինական փաստաթղթերի հետ միասին փորձաքննության ներկայացվում են նախագծման համար հիմք հանդիսացող օբյեկտի տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը, ինչպես նաև ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի դեպքում՝ շենքի (կառույցի) տեխնիկական, կոնստրուկտիվ լուծումների հիմնավորման հաշվարկները:

○ 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ բարձր ռիսկայնության աստիճանի IV կատեգորիայի դասակարգում ունեցող կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների փորձաքննության ներկայացվող փաստաթղթերի կազմում ներառվում է ՀՀ կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 4-ի № 1530-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգին համապատասխան կատարված ինժեներաերկրաբանական հետազննությունների նյութերի փորձաքննության եզրակացությունը:

○ 35-րդ կետի՝ մինչև պայմանագրի կնքումը փորձաքննություն իրականացնող մարմինը պարտավոր է ստուգել ներկայացվող քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթի կազմն ու ծավալը և սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխանության դեպքում կնքել պայմանագիրը: Անհամապատասխանության դեպքում փաստաթղթերը վերադարձվում են պատվիրատուին՝ առաջարկելով անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել եռօրյա ժամկետում:

○ 41-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի՝ փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի

- ելակետային փաստաթղթերին և օբյեկտի նախագծման տեխնիկական պայմաններին նախագծային լուծումների համապատասխանության վերաբերյալ կատարված եզրահանգումները:

- Հիմնական նախագծային լուծումների (սույն կարգի 23-րդ կետով սահմանված դեպքերում՝ նաև նախահաշվային փաստաթղթերի) վերլուծության արդյունքները, համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ

➢ բարձր ռիսկայնության աստիճանի IV կատեգորիայի դասակարգում ունեցող կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների փաստաթղթերը փորձաքննության են ներկայացվել առանց ինժեներաերկրաբանական հետազննությունների նյութերի փորձաքննության եզրակացություն, իսկ փորձաքննություն իրականացնող մարմինը փաստաթղթերը չի վերադարձրել պատվիրատուին և այդ փաստաթղթերի համար տվել է փորձագիտական դրական եզրակացություն:

➢ Քաղաքաշինական փաստաթղթերը փորձաքննության են ներկայացվել առանց օբյեկտի տեխնիկական վիճակի մասին եզրակացություն, իսկ փորձաքննություն իրականացնող մարմինը փաստաթղթերը չի վերադարձրել պատվիրատուին և այդ փաստաթղթերի համար տվել է փորձագիտական դրական եզրակացություն:

➢ Չեն նշվել այն նորմատիվատեխնիկական փաստաթղթերը, որոնց պահանջների նկատմամբ նախագծային հիմնական լուծումների համապատասխանության վերաբերյալ տրվել են եզրակացությունները:

➢ Նախագծանախահաշվային փաստաթղթերը և նախագծային լուծումները ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին չհամապատասխանելու պարագայում փորձաքննություն իրականացնող մարմինը տվել փորձագիտական դրական եզրակացություն: Մասնավորապես

○ Թվով 16 օբյեկտներում ավազակոպճային շերտի և/կամ սև խճի և/կամ խճի շերտի հաստությունները պակաս են ՀՀՇՆ 32-01-2022-ով սահմանված նվազագույն չափերից:

○ S-4-13, (Հ-39) (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի Կմ 0+000-Կմ 12+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ»-ի նախագծում երկաթբետոնյա օղակների վրայի լիցքի հաստությունը նախագծվել է 0.2 մ «ՀՀՇՆ 32-03.01-2024»-ով սահմանված նվազագույնը 0.5 մ-ի փոխարեն:

○ 11.12.2024 թվականին փորձագիտական դրական եզրակացություն է տրվել СНиП 2.05.03-84*-ի նորմերով նախագծված S-4-13, (Հ-39) (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի Կմ 0+000-Կմ 12+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ»-ի երկու կամուրջների կառուցման նախագծերին այն դեպքում, երբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի

փետրվարի 14-ի «ՀՀՇՆ 32-03.01-2024 «Կամուրջներ և խողովակներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի № 11-ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» № 08-Ն հրամանի 1-ին կետով հաստատվել է ՀՀՇՆ 32-03.01-2024 «Կամուրջներ և խողովակներ» ՀՀ շինարարական նորմերը, իսկ 2-րդ կետով ուժը կորցրած է ճանաչվել СНиП 2.05.03-84*-ը: Ընդ որում նախահաշվի մասով փորձագետը պահանջել է մեքենաների շահագործման արժեքն ավելացնել 1.05 գործակցով, հղում անելով ԵՐԵՐ-1984-ին, ինչի արդյունքում ավելացվել են նախահաշվային արժեքները այն դեպքում, երբ ԵՐԵՐ-1984 ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթուղթ չէ:

- Նախահաշիվներում մեքենամեխանիզմների շահագործման արժեքների վրա կիրառվել է 1.05 գործակից, այնինչ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի № 879-Ն որոշման Հավելված 8-ի 20-րդ կետի մեքենամեխանիզմների շահագործման արժեքի վրա կիրառվող միակ գործակիցը այլ մեքենաների շահագործման արժեքը հաշվի առնող 1.03 գործակիցն է:

«Տ4-13, /Հ-39/ (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի կմ0+000-կմ12+900 հատվածի հիմնանորոգում» օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերում ասֆալտբետոնյա ճանապարհածածկույթի և բնահողի քանդման աշխատանքները տարանջատված չեն հաշվարկվել, այլ հաշվարկվել են որպես մեկ ընդհանրական աշխատանք և դրանց տեղափոխման և կուտակման համար հատկացվել է մեկ տարածք, այնինչ համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» № 430-Ն հրամանի Հավելվածի՝ ասֆալտի և ասֆալտբետոնի խառնուրդի մնացորդները (ծածկագիր 31401200 01 00 4), ասֆալտի և ասֆալտբետոնի խառնուրդի մնացորդներ՝ ձյութի պարունակությամբ կամ առանց ձյութի (ծածկագրեր 31401001 03 00 4 և 31401002 03 00 4), փոշու տեսքով ասֆալտբետոնի և ասֆալտբետոնե խառնուրդների թափոնները (ծածկագիր 31403501 11 00 4) և կտորների տեսքով ասֆալտբետոնի և ասֆալտբետոնե խառնուրդների թափոնները (ծածկագիր 31403502 01 00 4) համարվում են վտանգավորության 4-րդ դասի թափոններ: Համաձայն «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ, 11-րդ և 17-րդ պարբերությունների այդ թափոնները պետք է տեղադրվեն հատուկ հատկացված տեղերում և համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վտանգավոր թափոնների գործածությունը (այդ թվում տեղափոխումը) հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները

Տեղեկացնում ենք, որ նախագծային աշխատանքների ժամանակ ՀՀՇՆ 32-01-2022 պահանջը չի դիտարկվել: Նախագիծը մշակվել է տվյալ ժամանակահատվածում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների համաձայն:

Համաձայն ՀՀ կառավարության 23.06.2011թ թիվ 879-Ն որոշման հավելված 8-ի 21-րդ կետի համաձայն՝ Մեքենաների ու մեխանիզմների շահագործման ծախսերի (1984 թ. գների նկատմամբ) անցման գործակիցը հաշվարկվում է աղյուսակում տրված բանաձևով: Ինչ վերաբերվում է Ձեր կողմից նշված 1,03 գործակցին, ապա այն չի կիրառվել, քանի որ դա ընդգրկված է մեքենաների շահագործման անցումային ինդեքսի մեջ: 1,05 գործակցի կիրառման վերաբերյալ տեղեկացնում ենք, որ 879-Ն որոշման 21-րդ կետով դրա կիրառումը չի բացառվում (տրված է հղում 1984թ գների նկատմամբ) – ЕРР Армянскои ССР 1985.12 том 1 тех. Част 12 – ծովի մակարդակի 1300մ և ավել բարձրության աշխատանքների դեպքում մեքեաների շահագործման ծախսերը անհրաժեշտ է բազմապատկել 1,05 գործակցով: «S4-13, /Հ-39/ (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի կմ0+000-կմ12+900 հատվածի հիմնանորոգում» օբյեկտի բարձրանիշերը սկսում են 1944 նիշից մինչև 2044մ բարձրությամբ՝ հաշվարկված ծովի մակարդակից:

Հայտնում ենք, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավարի կողմից տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքում կամ տեղեկանքի մեջ առանձին տարածքներ չի տրամադրվել:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Վերը նկարագարված աշխատանքները ՀՀՇՆ 32-01-2022 պահանջներով իրականացնելու վերաբերյալ որևէ անհամապատասխանություն չի արձանագրվել:

Առարկությամբ անդրադարձ է կատարվել արձանագրված 5 անհամապատասխաններից միայն մեկին այն էլ ՀՀ-ում չգործող նորմատիվի հիմնավորմամբ:

5.1.11 Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջի նկատմամբ:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ արգելվում է փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

- 2-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի՝ **գնման առարկայի բնութագիրը** գնման առարկայի հատկանիշներն են, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները:

- 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ գնման առարկայի բնութագրերը ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների

դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ մրցակցային գնման ձևերի կիրառմամբ կնքված կապալային աշխատանքների կատարման պետական գնման բոլոր պայմանագրերով կատարվել են ծավալաթերթերի և ժամանակացույցերի փոփոխություններ, առանձին դեպքում ծավալաթերթ-նախահաշվում նշված աշխատանքների 41%-ը փոխարինվել է այլ բնութագրեր ունեցող աշխատանքներով, իսկ աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել են 135 օրով:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները

Ծավալաթերթ-նախահաշվում աշխատանքների 41%-ի փոխարինում և աշխատանքների կատարման ժամկետի 135 օրով երկարաձգում չի կատարվել, Այսպես,

Թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/40Շ պայմանագրով նախատեսված Տ-4-13, /Հ-39/ (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի կմ0+000-կմ12+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ընդհանուր գումարը կազմել է՝ 3,250,200,000 դրամ, աշխատանքների կատարման համար սահմանվել է ընդհանուր՝ 300-օրյա ժամկետ:

Կնքված թիվ 1 համաձայնագրով 2023 թվականին նախատեսվել և իրականացվել էր 515,202,783 դրամի աշխատանք, որի իրականացման համար սահմանվել էր 50-օրյա ժամկետ:

Թիվ 2 համաձայնագրով չնախատեսված աշխատանքների և ծախսերի համար պայմանագրում ներառված և 2024 թվականին չօգտագործված միջոցներից պայմանագրի ընդհանուր արժեքը նվազեցվել է 15,038,071 դրամով և պայմանագրի ընդհանուր գինը 3,250,200,000 դրամի փոխարեն կազմել է 3,235,161,929 դրամ: Միաժամանակ, 2024 թվականին իրականացվող աշխատանքների համար հատկացվել է 1,500,000,000 դրամ, որի կատարման համար սահմանվել է 130-օրյա ժամկետ:

Թիվ 3 համաձայնագրով 2024 թվականին իրականացվող աշխատանքների համար տրամադրվել է ևս 200,000,000 դրամ, 2024 թվականի ծավալաթերթում կատարվել են համապատասխան փոփոխություններ (պայմանագրով նախատեսված ընդհանուր ծավալաթերթի շրջանակներում) և կատարման ժամկետը ավելացվել է 33 օրով, կազմելով 163 օր:

Արդյունքում՝

Տ-4-13, /Հ-39/ (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի կմ0+000-կմ12+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքների 2023-2024թթ.-ի իրականացման համար կապալառուին պայմանագրով սահմանված ընդհանուր գումարից տրամադրվել է 2,215,202,783 դրամ (3,250,200,000-515,202,783-15,038,071-1,500,000,000-200,000,000) իսկ ընդհանուր ժամկետից օգտագործվել է 213 օր (300-50-130-33):

Այսինքն, որևէ նոր աշխատանք, նոր գումար կամ նոր ժամկետ, որոնք ի սկզբանե նախատեսված չեն եղել թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/40Շ պայմանագրում, կապալառուին չի տրամադրվել:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Առարկություններ և բացատրություններ ներկայացվել են ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2023/40Շ պայմանագրի մասով, այնինչ արձանագրված անհամապատասխանությունում բերված օրինակը 41%-ի մասով վերաբերվում է ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/22Շ պայմանագրին, իսկ 135 օրով երկարաձգելու մասով ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/29Շ պայմանագրին:

5.1.12 Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 526-Ն որոշման Հավելված 1-ի 33-րդ կետի 10-րդ ենթակետի «բ» պարբերության, ՀՀ ֆինանսների նախարարի 2022 թվականի մայիսի 31-ի «Գնման ընթացակարգերի կազմակերպման ընթացքում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու, ՀՀ ֆինանսների նախարարի «2017 մայիսի 30-ի № 265-Ա հրամանում փոփոխություն կատարելու և 2022 թվականի մարտի 26-ի № 139-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» № 235-Ա հրամանի Հավելված 7-ի 3.4.9-րդ և 3.4.10-րդ կետերի նկատմամբ:

Համաձայն

✓ ՀՀ կառավարության 10.02.2011թ № 526-Ն որոշման Հավելված 1-ի 33-րդ կետի 10-րդ ենթակետի «բ» պարբերության՝ նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

✓ ՀՀ ֆինանսների նախարարի 31.05.2022թ № 235-Ա հրամանի Հավելված 7-ի՝

- 3.4.9-րդ կետի՝ եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր ապա պայմանագրի նախագծում **չպետք է ներառվի հետևյալ կետը՝** «Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ----- օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա

Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները»:

- 3.4.10-րդ կետի՝ կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի № – Հավելվածում:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ

- որևէ նախագծում նախագծողը չի ներկայացրել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, սակայն պայմանագրային գումարներն ամբողջությամբ վճարվել են:
- Պայմանագրերի հավելվածներով չեն սահմանվել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները:
- Պայմանագրերով նախատեսել են, որ «Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները» դրույթը, որը նախագծային փաստաթղթեր պահանջող շինարարական ծրագրերի դեպքում չպետք է նախատեսվեր:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները.

Հաշվի առնելով, որ

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշման Հավելված 1-ի 33-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքների թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 722-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքում, երբ աշխատանքի արդյունքի համար երաշխիքային ժամկետ չի սահմանվել, պատվիրատուն կարող է աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել՝ պայմանով, եթե դրանք հայտնաբերված լինեն ողջամիտ ժամկետում, սակայն աշխատանքի արդյունքը հանձնելու օրվանից ***երկու տարվա*** *սահմաններում: Այսինքն, ըստ էության, երաշխիքային ժամկետը պարտադիր է կատարված աշխատանքների նկատմամբ, շահագործման փուլում, կապալառուին որակի նկատմամբ*

պահանջ ներկայացնելու համար, ուստի պատվիրատուն, հաշվի առնելով վերը նշվածը և ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթից, համաձայն որի՝ Պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, երաշխիքային ժամկետի վերաբերյալ պահանջ է սահմանում է իր կողմից կազմակերպված գնման գործընթացներում՝ այն ներառելով մրցույթի հրավերի մեջ, ինչև և ընդունվել է Կապալառուի կողմից, ով կնքել է Կապալային աշխատանքների պայմանագիր, որտեղ նախատեսված է 3 տարվա ժամկետով երաշխիքային ժամկետը:

Հավելենք, որ նշված ժամկետով երաշխիքային ժամկետի սահմանումը, մեծացնում է ճանապարհը հիմնորոգող կապալառուի պատասխանատվությունը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Նախարարության առարկությունը վերաբերելի չէ արձանագրված անհամապատասխանությանը: Ներկայացված բացատրությունը վերաբերվում է օբյեկտի երաշխիքային ժամկետին, իսկ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերվում է նախագծերում և աշխատանքների կատարման պայմանագրերում օբյեկտի առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները չսահմանելուն:

Հավելենք, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 754-րդ հոդվածի՝ շինարարական աշխատանքների անպատշաճ լինելը հայտնաբերելու վերջնական ժամկետը համաձայն սույն օրենսգրքի 722-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի՝ ***<u>հինգ տարի է</u>****:*

5.1.13 Առկա է անհամապատասխանություն 2024 թվականին կնքված կապալային աշխատանքների կատարման պետական գնման՝ 38,946,971.13 հազ. դրամ ընդհանուր պայմանագրային գնով բոլոր 25 պայմանագրերի 4.1-րդ կետի երկրորդ պարբերության պահանջի նկատմամբ:

Համաձայն պայմանագրերի 4.1-րդ կետի երկրորդ պարբերության՝ պայմանագրերի շրջանակում կատարված և պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե կապալառուն ամբողջությամբ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգենիկ և բնապահպանական նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության գրավոր հավաստումը:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2024 թվականին աշխատանքներն ընդունվել են առանց վերը նշված գրավոր հավաստումների:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները.

Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգենիկ և բնապահպանական նորմերը չի ապահովվում պատվիրատուի կողմից այն ապահովում է կապալառուի կողմից և վերահսկվում է տեխնիկական հսկիչի կողմից:

Աշխատանքներն ընդունվում են այն պարագայում, եթե համապատասխանում են նախագծային փաստաթղթերին այսինքն համապատասխանում են ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական պահանջներին, որի հիման վրա իրականացված ծավալներով կազմվում է կատարողական ակտ, որն էլ ստորագրվում է տեխնիկական հսկողության կողմից: Կատարողական ակտի վրա տեխհսկողի ստորագրությունը պատվիրատուի կողմից ընդունվում է որպես հավաստում՝ այդ պահանջը ապահովված լինելու վերաբերյալ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

«Կատարողական ակտում» նշված են միայն աշխատանքների անվանումները և ծավալները, որոնք չեն բացահայտում, որ կապալառուն ամբողջությամբ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում՝ շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգենիկ և բնապահպանական նորմերը:

5.1.14 Առկա է անհամապատասխանություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 709-րդ հոդվածի 1-ին մասի, 744-րդ հոդվածի 1-ին մասի և բոլոր կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրերի 1.3-րդ կետի պահանջների նկատմամբ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 709-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Պատվիրատուն պարտավոր է պայմանավորված գինը կապալառուին վճարել աշխատանքի արդյունքները վերջնական հանձնելուց հետո, պայմանով, եթե աշխատանքը կատարված է պատշաճ և պայմանավորված ժամկետում կամ ժամկետից շուտ՝ պատվիրատուի համաձայնությամբ, եթե կատարվող աշխատանքի կամ դրա առանձին փուլերի նախնական վարձատրություն նախատեսված չէ կապալի պայմանագրով:», իսկ համաձայն 744-րդ հոդվածի 1-ին մասի՝ «կապալառուի կատարած աշխատանքը պատվիրատուն վարձատրում է նախահաշվով նախատեսված չափով՝ շինարարական կապալի պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով...»:

Համաձայն 2024 թվականի ընթացքում գործող բոլոր պայմանագրերի 1.3-րդ կետի՝ «... առանձին տեսակի աշխատանքների և ծավալների կատարման ժամկետները սահմանված են պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով...»:

Համաձայն նույն պայմանագրերի 4-րդ բաժնի 4.1-րդ կետի՝ «կատարված աշխատանքն ընդունվում է կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ կապալառուն պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով նաև հանձնման-ընդունման արձանագրությունը:», իսկ նույն բաժնի 4.5-րդ կետի համաձայն՝ «Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները:»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2024 թվականին կազմված հանձնման-ընդունման արձանագրությունները չեն համապատասխանում պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքներին, փուլերին և ծավալներին և սահմանված ժամկետներին:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները.

2024 թվականին կազմված հանձնման-ընդունման արձանագրությունները համապատասխանում են պայմանագրերով նախատեսված պահանջներին և նույն պայմանագրով աշխատանքների փուլային իրականացում նախատեսված չէ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով կնքված պայմանագրերի շրջանակներում աշխատանքները սահմանվում են տվյալ տարում հատկացված ֆինանսական միջոցներին համապատասխան, որից հետո կապալառուի հետ կնքվող համաձայնագրով հաստատվում են այդ տարվա համար իրականացման ենթակա աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը, օրացուցային գրաֆիկը և վճարման ժամանակացույցը՝ հատկացված գումարի շրջանակներում:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Պայմանագրի 1.3-րդ կետով սահմանվում է, որ «... առանձին տեսակի աշխատանքների և ծավալների կատարման ժամկետները սահմանված են պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով»: Պայմանագրի փուլային կամ ոչ փուլային կատարումը վերաբերվում է վերջնարդյունքին:

5.1.15 Առկա է անհամապատասխանություն կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրերի 3.4.5-րդ կետի պահանջի նկատմամբ:

Համաձայն պայմանագրերի 3.1.2-րդ կետի՝ «Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տույժը:»:

Համաձայն նույն Կապալի պայմանագրերերի 3.4.5-րդ կետի Կապալառուն պարտավոր է՝ «Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տույժը»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ աշխատանքների առանձին փուլերի կատարման օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետների խախտման դեպքերով աշխատանքների կատարման նոր ժամկետներ չեն սահմանվել և տույժեր չեն հաշվարկվել:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները.

Ճանապարհաշինարարության համար կնքված կապալի պայմանագրերի 1.4 կետով նշված է, որ պայմանագրի կատարումը փուլային չէ և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված է պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ:

Ինչ վերաբերում է օրացուցային գրաֆիկով, բացի ընդհանուր ժամկետից, սահմանված որոշ տեսակի աշխատանքների կատարման ժամկետներին, ապա դրանք պատվիրատուի կողմից դիտարկվում են որպես կողմնորոշիչ ժամկետներ, որոնք պատվիրատուին հնարավորություն են տալիս հետևելու շինարարական աշխատանքների կատարման տեխնոլոգիական պրոցեսներին, և հիմնականում կապալառուի նկատմամբ պատասխանատվության միջոցներ են կիրառվում օրացուցային գրաֆիկով ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների կատարման ընդհանուր ժամկետի խախտման դեպքում:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Պայմանագրի 1.4-րդ կետը վերաբերվում է վերջնարդյունքին և առնչություն չունի արձանագրված անհամապատասխանության հետ: Անհամապատասխանությունն արձանագրվել է գործող պայմանագրերի 3.4.5-րդ կետ(եր)ի պահանջ(ներ)ի նկատմամբ, համաձայն որի Կապառուն պարտավոր է «...Պայմանագրի 1.3-րդ կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել

աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տույժը»:

5.1.16 Առկա է անհամապատասխանություն «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի նկատմամբ:

Համաձայն «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի՝ սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների շինարարական նախագծերի ու ավարտական ակտերի համաձայնեցումը կատարվում է լիազոր մարմնի մասնակցությամբ՝ ղեկավարվելով սեյսմակայուն շինարարության նորմերով և սեյսմիկ ռիսկի գնահատումներով:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևոր նշանակության օբյեկտների շինարարական նախագծերի ու ավարտական ակտերի համաձայնեցումները կատարվել են առանց լիազոր մարմնի մասնակցության:

5.1.17 Առկա է անհամապատասխանություն ՀՀ ֆինանսների նախարարի 2022 թվականի մայիսի 31-ի № 235-Ա հրամանի[13] Հավելված 7-ի հավելված 1-ի՝ ծավալաթերթ նախահաշվի պահանջի նկատմամբ:

Համաձայն Հավելված 7-ի հավելված 1-ի՝ ծավալաթերթ նախահաշվում պետք է նշվի աշխատանքների կատարման հասցեն, այնինչ ըստ տարիների կնքված համաձայնագրերի ծավալաթերթ նախահաշիվներում նշվել են օբյեկտի ամբողջական նախագծի ընդհանրական ԿՄ-երը, չնշելով այն հասցեն (հատվածները), որտեղ պետք է իրականացվեն տվյալ տարվա ծավալաթերթ նախահաշվում նշված աշխատանքները:

5.1.18 Առկա է անհամապատասխանություն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 14-ի «ՀՀՇՆ 32-03.01-2024 «Կամուրջներ և խողովակներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի № 11-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» № 08-Ն հրամանի հավելվածի 9-րդ կետի 10-րդ ենթակետի նկատմամբ:

---

[13] *ՀՀ ֆինանսների նախարարի 2022 թվականի մայիսի 31-ի «Գնման ընթացակարգերի կազմակերպման ընթացքում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու, ՀՀ ֆինանսների նախարարի 2017 մայիսի 30-ի № 265-Ա հրամանում փոփոխություն կատարելու և 2022 թվականի մարտի 26-ի № 139-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» № 235-Ա հրաման:*

Համաձայն նշված ենթակետի՝ նոր և վերակառուցվող կամուրջների ու խողովակների նախագծերում ընդունվող հիմնական տեխնիկական լուծումները, պետք է հիմնավորվեն մրցունակ տարբերակների տեխնիկատնտեսական ցուցանիշների համեմատությամբ:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ կամուրջների և խողովակների բոլոր նախագծերում բացակայում են հիմնական տեխնիկական լուծումների մրցունակ այլընտրանքային տարբերակները և լուծումների ընտրությունները հիմնավորող մրցունակ տարբերակների տեխնիկատնտեսական ցուցանիշների համեմատականները:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները.

Նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստող կազմակերպությունը շինարարական օբյեկտին տրվող նախագծային լուծումները աշխատանքային կարգով համաձայնեցնում է պատվիրատուի հետ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Անհամապատասխանությունն արձանագրվել է ոչ թե նախագծային լուծումները պատվիրատուի հետ համաձայնեցնելու պահանջի, այլ այդ լուծումների ընտրությունն այլընտրանքային տարբերակների տեխնիկատնտեսական ցուցանիշների համադրմամբ հիմնավորելու պահանջի հետ: Հաշվեքննությանը որևէ այլընտրանքային տարբերակի տեխնիկատնտեսական ցուցանիշների հետ համադրումներ չեն ներկայացվել:

5.1.19 Առկա է անհամապատասխանություն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 14-ի «ՀՀՇՆ 32-03.01-2024 «Կամուրջներ և խողովակներ» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի № 11-ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» № 08-Ն հրամանի հավելվածի 33-րդ կետի պահանջի նկատմամբ:

Համաձայն 33-րդ կետի՝ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկաթբետոնյա խողովակների օղակների կամ ծածկի սալերի վրայի լիցքի նվազագույն հաստությունը պետք է կազմի 0.5մ այնինչ «Տ-4-13, (Հ-39) (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի Կմ 0+000-Կմ 12+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ»-ի նախագծում օղակների վրայի լիցքի հաստությունը կազմում է 0.2 մ:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները.

Տեղեկացնում ենք, որ նախագծային աշխատանքները իրականացվել է 2021-2022թթ-ին: Տվյալ ժամանակահատվածում հնարավոր չի եղել դիտարկել ՀՀՇՆ 32-03.01-2024թ նորմատիվային պահանջները: Նախագծային աշխատանքները

իրականացվել են СНиП 2.05.03-84-ի նորմատիվային պահանջի աղյուսակ 1-ի համաձայն՝ այն է, ճանապարհային հագուստի մոնոլիտ շերտից (մոնոլիտ շերտ ընդունվում է ա/բետոնե կամ ե/բետոնե պատվածքը) 0,5մ խորությամբ: Հաշվի առնելով նորմատիվային պահանջը նախագծված խողովակները տեղադրված են ճանապարհի մոնոլիտ շերտից 50սմ խորության վրա: Միաժամանակ նշենք նաև, որ տվյալ ճանապարհը անցնում մեծամասսամբ կառուցապատված բնակելի տարածքով, որտեղ շատ հաճախ հնարավոր չէ իրականացնել վերատեղադրվող խողովակների հունի խորացում:*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

*Նշված նորմատիվատեխնիկական փաստաթղթում չկա նշում, որ «մոնոլիտ շերտ ընդունվում է ա/բետոնե կամ ե/բետոնե պատվածքը»: Աղյուսակ 1-ում նշված է «ճանապարհային հագուստի միաձույլ **շերտերի** ներքևի մակարդակից 0.5մ հաստությամբ», ինչը նույնն է, ինչ որ_ՀՀՇՆ 32-03.01-2024-ով սահմանված պահանջը:*

5.2 «Պետական աջակցություն բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների իրականացման միջոցառում » (1232-12002)

Առկա է անհամապատասխանություն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. № 254-Ն հրամանով հաստատված «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» /ձև Հ-2/ և «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին» /ձև Հ-4/ հաշվետվություններում փաստացի ծախսերի և կրեդիտորական պարտքերի արտացոլման պահանջների նկատմամբ:

Համաձայն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «….գործառնությունները, այլ դեպքերը և իրադարձությունները ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում և ներկայացվում են այն ժամանակահատվածների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են»:

Հաշվեքննությամբ արձանագրվել է՝

«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Պետական աջակցություն բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների իրականացման» (1232-12002) միջոցառման ֆինանսավորման համար տարեկան պլանով նախատեսվել է 1,192,000.0 հազ. դրամ, հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանով սահմանվել է 3,330,432.0 հազ. դրամ: Համաձայն հաշվետվության ձև Հ-2-ի՝ ֆինանսավորումը կազմել է

3,330,422.5 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 3,330,422.5 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 3,751,548.7 հազ. դրամ:

ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 26-ի «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի իրականացման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի թիվ 520-Լ որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» № 775-Լ որոշմամբ հաստատվել է «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի իրականացման կարգը»: Համաձայն նախարարի 2022 թվականի հունիսի 17-ի № 25-Լ հրամանով հաստատված Նախարարության և բանկերի ու վարկային կազմակերպությունների միջև համագործակցության պայմանագրի օրինակելի ձևի 10-րդ կետի 1-ին ենթակետի՝ ֆինանսական կառույցը պարտավոր է՝ «…մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Նախարարության էլեկտրոնային փոստի հասցեով (mtai.secretariat@gmail.com) ներկայացնել Սուբսիդավորման գումարի փոխանցման վերաբերյալ հայտ…», իսկ պայմանագրի 11-րդ կետով Նախարարությունը պարտավոր է « … պայմանագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում նշված տեղեկությունները ստանալուց հետո առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրել դրանց համապատասխանությունը Որոշմամբ և Կարգով սահմանված պահանջներին (պահանջներին բավարարող Շահառուն ինքնաշխատ եղանակով համարվում է Ծրագրի շահառու) և Ֆինանսական կառույցի Հատուկ հաշվին փոխանցել հայտի ներկայացմանը նախորդող ամսվա ընթացքում տրամադրված վարկերի գծով նախատեսված Սուբսիդավորման գումարները»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ առկա են Նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից տրված պայմանագրային պարտավորությունների պահանջներին բավարարելու մասին բոլոր եզրակացությունները, որոնք էլ հիմք են հանդիսացել ֆինանսական կառույցներին վճարումները կատարելու համար:

Տվյալ ծրագրային միջոցառմամբ՝

- 2023 թվականի դեկտեմբեր ամսվա համար հաշվարկված՝ 186,767.3 հազ. դրամի սուբսիդավորման հայտերը սահմանված կարգով ներկայացվել են Նախարարությանը 2024թ. հունվար ամսին և վճարումները կատարվել են 2024 թվականին: Այդուհանդերձ, 2024 թվականի տարեկան հաշվետվության մեջ հունվարի 1-ի դրությամբ որպես կրեդիտորական պարտք արտացոլվել է 0, այն դեպքում, երբ այն կազմել է 186,767.3 հազ. դրամ:

Նախարարության առարկություններն ու բացատրությունները.

*Ինչպես և նշել է **ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախորդ դիտարկումներում** ծրագրին մասնակից բանկերն ու*

*վարկային կազմակերպությունները հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ծրագրում դիտարկվել են, որպես **ֆինանսական գործակալներ**, իսկ այդ պարագայում դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չեն առաջանում: Հետևաբար 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ որպես կրեդիտորական պարտք 0 արտացոլելը առավել քան ճիշտ է, ըստ վերոնշյալ կիրառված սկզբունքի: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Ձեր կողմից ներկայացված դիտարկումը, տվյալ միջոցառման շրջանակներում կանխատեսվող ծախսն **արդեն իսկ ինն ամիսների** «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» /ձև Հ-2/ և «Հաշվետվություն հիմնարկի դեբետորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների» /ձև Հ-4/ հաշվետվություններում **արտացոլվել է՝ որպես կրեդիտորական պարտք:***

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Տվյալ պետական աջակցության ծրագրի իրականացման շրջանակներում դեբիտորական և կրեդիտորական պարտքեր առաջանում են ոչ թե ֆինանսական կառույցների, այլ շահառու հանդիսացող անձանց նկատմամբ: Հետևաբար նշված ծրագրային միջոցառման շրջանակում իրականցման ընթացքում առաջացող պարտավորությունները ենթակա են հաշվառման և հաշվետվություններում արտացոլման հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան:

- Նախարարության 2024 թվականի տարեկան հաշվետվության մեջ որպես փաստացի ծախսի ցուցանիշ արտացոլվել է 3,751,548.7 հազ. դրամ, այն դեպքում, երբ կազմակերպությունների կողմից ներկայացրած հայտերի համաձայն, այդ ցուցանիշը 3,603,719.3 հազ. դրամ է կամ տարբերությունը կազմում է 147,824.4 հազ. դրամ:
- Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպությունների կողմից ներկայացրած հայտերի հիման վրա ձևավորված (կուտակված) վճարման ենթակա պարտավորությունը՝ կրեդիտորական պարտքը կազմել է 3,603,719.3 հազ. դրամ: 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա կրեդիտորական պարտքը, ինչպես նշվել է վերևում, կազմել է 186,767.3 հազ. դրամ կամ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ վճարման ենթակա պարտավորությունը՝ կրեդիտորական պարտքը կազմել է 3,790,486.6 հազ. դրամ:

Նախարարության 2024 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 3,330,422.5 հազ. դրամ: Արդյունքում, հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ վճարման ենթակա պարտավորության՝ կրեդիտորական պարտքի գումարը կազմում է 460,064.1 հազ. դրամ (3,790,486.6-3,330,422.5): Մինչդեռ, Նախարարության նույն ժամանակահատվածի վերջի դրությամբ կրեդիտորական պարտքն արտացոլվել է 421,126.2 հազ.դրամ: Տարբերությունը կազմում է 38,937.9 հազ. դրամ (460,064.1-421,126.2):

Նախարարության առարկություններն ու բացատրությունները.

Հարկ է նշել, որ կազմակերպությունների կողմից ներկայացրած հայտերի համաձայն, ցուցանիշը ոչ թե 3,599,931.5 հազար դրամ է, այլ 3,564,781.4 հազար դրամ, և տարբերությունը փաստացի 3,751,548.7 հազ. դրամ ծախսի հետ կազմում է 186,767.3 հազար դրամ: Կից ներկայացվում է նաև «Շրջանառության տեղեկագիրը» արտահանված ՀԾ ծրագրից 01.01.2024-31.12.2024թթ. ժամանակահատվածի համար, ինչպես նաև Բանկերի կողմից 2024թ-ի ընթացքում ՏԿԵՆ ներկայացված հայտերի վերաբերյալ տեղեկանքը:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք Արձանագրության 2-րդ բաժինը *և «III. Արձանագրված խեղաթյուրումներ» բաժնի «Պետական բյուջեի կատարման վերաբերյալ կարծիքի վրա չազդող խեղաթյուրումներ» բաժիի 3.1 կետը հանել Արձանագրությունից:*

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննությամբ արձանագրված կրեդիտորական պարտքերն օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է ճանաչվեն, ձևակերպվեն և հաշվետվությամբ արտացոլվեն, ոչ թե որպես բանկերին ու ֆինանսական կառույցներին, այլ շահառուներին վերագրվող պարտավորություններ:

Սույն ընթացիկ եզրակացության վերը նշված փաստացի ծախսի և կրեդիտորական պարտքերի ցուցանիշները ճշտվել են Նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա: Այդուհանդերձ, հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունը չի վերացել, քանի որ 5 բանկերի կողմից 2025 թվականի հունվարին ներկայացված 2024 թվականի դեկտեմբեր ամսվա համար հաշվարկված սուբսիդավորման ենթակա գումարներն՝ ընդհանուր 38,937.9 հազ. դրամի չափով, հաշվեգրման սկզբունքի համաձայն չի ձևակերպվել որպես 2024 թվականի դեկտեմբեր ամսվա փաստացի ծախս:

7. ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

«Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» (1049-21001) և «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» (1049-21002) միջոցառումներ (1212-12002)

- Կատարվել են ասֆալտբետոնյա ծածկից կատարված հանուկներով վերին շերտի հաստության և խտացման գործկիցների՝ ծակոտկենության լաբորատոր փորձարկումներ: Փորձարկման արձանագրություններում որպես փորձարկման ցուցանիշի արժեք սահմանող ՆՓ (նորմատիվատեխնիկական փաստաթուղթ) նշել են ԳՕՍՏ 9128-2013-ը, ՀՀՇՆ 32-01-2022-ը և СП 78.13330.2012-ը: Նշված ՆՓ-երից ոչ մեկով ասֆալտբետոնե շերտի հաստության թույլատրելի շեղումների և խտացման գործակցի՝ ծակոտկենության ցուցանիշներ սահմանված չկան, իսկ СП 78.13330.2012-ն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթուղթ չէ: Ընդ որում փորձարկման արձանագրություններում առանձին դեպքերով խտացման գործակիցը պակաս է ցույց տրվել իրենց կողմից ցույց տրված թույլատրելի ցուցանիշից սակայն աշխատանքները չեն մերժվել: Օրինակ «Տ4-13, /Հ-39/ (Գավառ)-Գանձակ-Սարուխան-Գեղարքունիք ավտոճանապարհի կմ0+000-կմ12+900 հատվածի հիմնանորոգում» օբյեկտի 20.05.2024թ. № 721 հանուկի փորձարկման արձանագրության համաձայն հանուկներից մեկի խտացման գործակիցը 0.99-ի փոխարեն կազմել է 0.984:

Շերտերի բարձրանիշերի, լայնության, խտության, անվադողերի և ծածկի միջև անհրաժեշտ կառչելիության գործակիցների, հարթության և աշխատանքները ընդունելու համար այլ պարտադիր ցուցանիշները սահմանված էին ճանապարհների ***նախագծման և կառուցման*** ՀՀՇՆ IV-11.05.02-99-ով, որը ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի № 28-Ն հրամանի 2-րդ կետով: Նույն հրամանով հաստատվել է ճանապարհների ***նախագծման*** ՀՀՇՆ 32-01-2022-ը, սակայն առ այսօր չի ընդունվել ճանապարհների ***կառուցման նոր ՀՀՇՆ***:

Նախարարության ներկայացրած առարկություններն ու բացատրությունը

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի № 28-Ն հրամանի 2-րդ կետով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀՇՆ IV-11.05.02-99 շին. նորմերը:

Նույն հրամանով հաստատվել է ՀՀՇՆ 32-01-2022-ը, որով սահմանվել են միայն բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող նոր կառուցվող, վերակառուցվող և հիմնանորոգվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև արտադրական և գյուղատնտեսական կազմակերպություններին, պատմամշակութային կառույցներին մոտեցնող ճանապարհների նախագծման սկզբունքները:

Հաշվի առնելով այն, որ մինչև 2025 թվականի փետրվարը ՀՀ տարածքում նոր կառուցվող, վերակառուցվող և հիմնանորոգվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների շինարարական աշխատանքների կատարման և

դրանց որակի հսկողության վերաբերյալ պահանջներ սահմանող գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթեր առկա չեն եղել, հետևաբար մինչև նոր կառուցվող, վերակառուցվող և հիմնանորոգվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների շինարարական աշխատանքների կատարման և դրանց որակի հսկողության սկզբունքները սահմանող «Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմերի ուժի մեջ մտնելը կատարված աշխատանքների ընդունման ընթացքում առաջնորդվել ենք անալոգիայի սկզբունքով ընտրված նախադեպերի փաստաթղթային տվյալներով: Տվյալ դեպքում անալոգիայի սկզբունքով ընտրված նախադեպերի փաստաթղթային հիմքն դիտարկվել է նախկին ՀՀՇՆ IV-11.05.02-99 «Ավտոմոբիլային ճանապարհներ» շինարարական նորմերում նշված Շինարարական աշխատանքների կատարման և դրանց որակի հսկողության վերաբերյալ առկա տվյալները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Փորձարկման արձանագրություններում որպես փորձարկման ցուցանիշի արժեք սահմանող նորմատիվատեխնիկական փաստաթուղթ նշել են ԳՕՍ 9128-2013-ը, ՀՀՇՆ 32-01-2022-ը և СП 78.13330.2012-ը այլ ոչ ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի անալոգիան: Բացի այդ ՀՀՇՆ IV-11.05.02-99-ի պահանջները կիրառելու դեպքում աշխատանքները առանց անվադողերի և ծածկի միջև անհրաժեշտ կառչելիության գործակիցների ստուգման ընդունման ենթակա չէին, այնինչ նշված գործակցի որևէ ստուգում չի կատարվել: Բացի այդ, փորձարկման արդյունքում խտացման գործակիցը 0.99-ից պակաս ստանալու դեպքում աշխատանքը ընդունման ենթակա չէր, սակայն այն ընդունվել է:

- Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ պարբերության՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը պարտադիր է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների՝ կառուցապատողներից բացի նաև նախագծային փաստաթղթեր կազմողների, քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն իրականացնողների, շինարարություն իրականացնողների, շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողների և քաղաքաշինական գործունեության վերահսկողություն իրականացնողների համար, այնինչ հաշվեքննությամբ պարզվել է, որ
  - ՀՀՇՆ 32-01-2022-ը ուժի մեջ մտնելուց՝ 12.12.2022թ.-ից հետո նախագծվել և փորձաքննության դրական եզրակացություններ են ստացել 9-ը օբյեկտների նախագծեր և դրանց հիման վրա կնքվել են շինարարական աշխատանքների կատարման պայմանագրեր և 2024 թվականին իրականացվել են աշխատանքներ, որոնցով հաշվարկված 150784 քմ ավազակոպճային հիմքի շերտի և 103017 քմ սև խճի շերտի հաստությունները պակաս են ՀՀՇՆ 32-01-2022-ի աղյուսակ 42-ում սահմանված նվազագույնը չափերից:
  - Մինչ ՀՀՇՆ 32-01-2022-ը ուժի մեջ մտնելը կազմված նախագծերի հիման վրա, ՀՀՇՆ 32-01-2022-ը ուժի մեջ մտնելուց հետո՝ 2023 թվականին և 2024 թվականին

կնքված շինարարական աշխատանքների կատարման 7 պայմանագրերով նախատեսվել է 230869 քմ ավազախճային հիմքի, 63009 քմ սև խճի և 11140 քմ խճային հիմքի կառուցման աշխատանքներ, որոնց հաստությունները պակաս են ՀՀՇՆ 32-01-2022-ի 42-րդ աղյուսակով սահմանված նվազագույն չափերից:

- Պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցիչների՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացություն տրամադրած անձանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի հավելվածների
  - 2-րդ պարբերությամբ նախատեսվել է, որ անձն ուսումնասիրում է նախագծերի նախապատրաստման փուլում ներկայացվող նախագծանախահաշվայինփաստաթղթերը, ստուգում և համեմատում է դրանց համապատասխանությունը տեխնիկական բնությագրին և ներկայացնում համապատասխան եզրակացություն դրանց վերաբերյալ:
  - 4-րդ պարբերությամբ նախատեսվել է, որ շինարարական աշխատանքների ընթացքում կատարում է այցելություններ շինարարական օբյեկտներ, հետևում է շինարարական աշխատանքների առաջընթացին և պատրաստում ամսեկան, եռամսյակային, տարեկան և այլ (ըստ անհրաժեշտության) հաշվետվություններ:
  - 5-րդ պարբերությամբ նախատեսվել է, որ ուսումնասիրում է շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպությունների, նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմող և տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից առաջարկվող նախագծային փոփոխությունները և ներկայացնում համապատասխան եզրակացություններ դրանց վերաբերյալ:
  - 7-րդ պարբերությամբ նախատեսվել է, որ ուսումնասիրում է նախագծային կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվությունները, գծագրերը, տեխնիկական մասնագրերը, աշխատանքների ծավալաթերթերը, նախահաշիվները, տեխնիկատնտեսական վերլուծությունները և ներկայացնում համապատասխան մասնագիտական կարծիք:

Հաշվեքննության ընթացքում հայցվել էր ՀՀ Կոտայքի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի և Արագածոտնի մարզերում իրականացրած աշխատանքների պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցիչների կողմից կազմված վերը նշված եզրակացությունները և հաշվետվությունները, սակայն դրանք չեն ներկայացվել:

- Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման,

ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և **չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից**:

2024 թվականին իրականացրած աշխատանքների նախահաշվային արժեքների և պայմանագրային գների համադրումից պարզվել է, որ նույն ճանապարհի՝ Մ-10 Սևան-Մարտունի-Գետափի համար նույն կապալառուի «Շ.Ս.» ՍՊԸ-ի հետ 2024 թվականին կնքված պայմանագրի պայմանագրային գինը կազմում է նախահաշվային արժեքի 70%-ը (3,128,714.00 հազ. դրամ/2,187,000.00 հազ. դրամ), իսկ 2022 թվականին կնքված պայմանագրի պայմանագրային գինը կազմում է նախահաշվային արժեքի 100%-ը (3,300,000.00 հազ. դրամ):

«Մ-1 Երևան-Գյումրի-Վրաստանի սահման» օբյեկտի համար «Ա.Պ.»-ի հետ կնքած պայմանագրային գինը նախահաշվային արժեքի 100%-է (3,250,235.00 հազ. դրամ), իսկ «Մասիսի տրանսպորտային հանգույց-Մասիս-Ռանչպար-Արաքս-Ջրառատ» օբյեկտի համար պայմանագրային գինը նախահաշվային արժեքի 69%-ը (3,475,392.00 հազ. դրամ / 2,384,900.00 հազ. դրամ):

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ձեռնարկել միջոցներ՝

1. Օրենսդրությամբ սեյսմիկ պաշտպանության բնագավառի կարևոր նշանակության օբյեկտների՝ կամուրջների, ուղեանցների, վերականգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը պետական համալիր փորձաքննության ենթարկելու, ավտոմոբիլային ճանապարհների վերակառուցման շինարարական նորմերով սահմանված ճանապարհածածկույթի ամրությունն ապահովող նորմերի պահպանման ուղղությամբ,
2. Շինարարական աշխատանքների կատարման պայմանագրերով կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետներ և օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցներ սահմանելու ուղղությամբ,
3. Կապալային աշխատանքների պայմանագրերով առանձին փուլերով կատարման օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետների խախտման դեպքերում պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ,
4. Հաշվապահական հաշվառումը Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի[14] ու հաշվապահական հաշվառման պլանի և դրա կիրառման հրահանգի[15] պահանջներին համապատասխան վարելու համար,
5. Պետական գնման պայմանագրերում փոփոխություններ (ժամկետի, գնի և ծավալ) իրականացնելու կարգեր և չափանիշներ սահմանելու ուղղությամբ:

Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը:

Գագիկ Բարսեղյան _____
Հաշվեքննիչ պալատի անդամ

«29» ապրիլ, 2025 թվական
ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Մ.Բաղրամյան 19, Երևան
Հայաստանի Հանրապետություն

---

[14] Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի № 725-Ն հրամանով:
[15] Հաստատված է ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 9-ի № 207-Ն հրամանով: